

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«----» ----- 2020թ.

N-----Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Երևանի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ քաղաքապետը հաշվետվություն է ներկայացնում Երևան քաղաքի ավագանուն:

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը կազմվել է Երևանի քաղաքապետի 05.04.2019թ. 1041-Ա որոշմամբ ընդունված ձևաչափով:

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Ծրագրի կամ միջոցառման անվանում», «Նախատեսված աշխատանքների նկարագիր», «Աշխատանքների իրականացման գործընթաց» և «Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ»: Հաշվետվության կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները:

Հաշվետվության մեջ մանրամասն ներկայացված են Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրով նախատեսված և իրականացված աշխատանքների վերաբերյալ ծավալային և քանակական տվյալները:

Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2020 թվականի փետրվարի 5-ի նիստի դրական եզրակացությամբ «Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացվել է հանրային քննարկումների: Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ.45-Ն և Երևանի քաղաքապետի 2020 թվականի փետրվարի 5-ի հ.318-Ա որոշումների համաձայն՝ 2020 թվականի փետրվարի 6-ից 21-ը ներառյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ՝ հանրային բաց լսումների եղանակով: Հանրային քննարկումների արդյունքներն ամփոփվել են 2020 թվականի փետրվարի 26-ին հրավիրված Խորհրդի նիստում: Խորհրդի անդամների կողմ քվեարկությամբ տրվել է դրական եզրակացություն՝ Նախագիծը սահմանված կարգով Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Երևան քաղաքի ավագանուն է ներկայացվում Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2020 թվականի մարտի ____-ի N ____-Ա որոշման

Երևանի զարգացման
2019 թվականի ծրագրի իրականացման
հաշվետվություն

Քաղաքաշինություն և ճարտարապետություն

Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատման և բացառմանն ուղղված քայլերի ձեռնարկում	Նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և դրա արդյունքում հանրային շահի ռոտնահարումը:	<p>Նախկինում հանրային կանաչ տարածքներում սեփականության իրավունքով (եթե այդպիսիք առկա են) և վարձակալությամբ հողամասերի տրամադրված պայմանագրերի վերանայման ուղղությամբ /կառուցապատում չդիտարկելով/ միջոցներ են ձեռնարկվում, նաև դրանց սահմանված կերպով կասեցման, վաղաժամկետ լուծման, և չեղարկման կամ փոխանակման:</p> <p>1. Արաբկիրի կենտրոնական Կոմիտասի պողոտայի փակ շուկայի մուտքին հարող մայթին տեղադրված առևտրային տաղավարներն ապամոնտաժվել են՝ մայթի ընդհատված ծառուղին վերականգնելու նպատակով:</p> <p>Ապամոնտաժվել են կենտրոնի մի շարք կրպակներ ու տաղավարներ՝ ճարտարապետական տեսքը պահպանելու, ընդհանուր օգտագործման տարածքները բարելավելու, ինչպես նաև կենտրոնի մայթերի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու ու բացօթյա առևտուրը կանոնակարգելու նպատակով՝</p> <p>2. Օղակաձև զբոսայգու 5-րդ հատվածում ապամոնտաժվել է տարիներ շարունակ չգործող, անխնամ վիճակում գտնվող սրճարանը:</p> <p>Ապամոնտաժվել են նաև բետոնապատ տարածքներն ու մետաղական կոնստրուկցիաները: Տարածքը հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:</p> <p>3. Նար-Ղոս փողոցի 75 շենքի դիմացի հատվածում ինքնակամ տեղադրված կրպակները ապամոնտաժվել են՝ տարածքը բանկարգելու համար: Նմանատիպ կերպով վերականգնվում են հանրային տարածքները Կասկադ թաղամասի Իսահակյան փողոցի հ.38 հասցեին հարակից, Ղազար Փարպեցի հ.13 հասցեի դիմաց, Վարդանանաց-Եր.Քոչարի փողոցի խաչմերուկի մոտ տարածքներում, Մանկավարժական համալսարանի և Կոնսերվատորիայի հարևանությամբ, չգործող ու հակասանիտարական վիճակում գտնվող ծաղկի տաղավարները:</p> <p>Տնտեսվարողները սեփական ուժերով ապամոնտաժել են Խանջյան փողոցի 13, Խորենացի 26, Մաշտոցի պողոտայի 3 հասցեների դիմաց</p>	Վարչական շրջաններ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն	Երևանի քաղաքապետի կարգադրություն հ.548-Ա 08.11.2018թ. աշխատանքային խումբ ստեղծելու մասին

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>տեղադրված տաղավարները: Ապամոնտաժվել են նաև ծառերի վրայով անցկացված էլեկտրական հոսանքալարերը, որոնք ստեղծել էին հրդեհավտանգ իրավիճակ: Տարածքներն ամբողջությամբ մաքրվել են, ըստ անհրաժեշտության նաև կբարեկարգվեն:</p> <p>Իսակովի պողոտայի վրա գտնվող ավտոկայանի մոտ առանց թույլտվության առկա կրպակաշարը քանդվել է և ազատագրվել է կանաչ գոտու տարածքը:</p> <p>Ավանի Թումանյան թաղամասում ավտոտնակների փոխարեն նոր այգի՝</p> <p>Ավան վարչական շրջանի Թումանյան թաղամասում շահագործման է հանձնվել նոր հանգստի գոտի: Բազմաբնակարան 15 շենքերի միջանկյալ հատվածում գտնվող շուրջ 5000 քմ տարածքն ամբողջությամբ բարեկարգվել է: Լիարժեք հանգստի կազմակերպման համար ստեղծվել են անհրաժեշտ բոլոր պայմանները: Բակային հատվածում նախկինում ավտոտնակներ ու բնակիչների կողմից ինքնակամ զբաղեցված տարածքներ են եղել. բնակցությունների շնորհիվ դրանք վերադարձվել են համայնքին: Այսօր այն հանրային տարածք է և հանձնվում է հանգստի գոտու հարևանությամբ ապրող շուրջ 2000 բնակիչների տնօրինմանը: Այգին կառուցվել է վարչական շրջանի տնտեսումների հաշվին:</p> <p>Արաբկիր զբոսայգին վերադարձվել է համայնքին: Շուրջ 3 հա զբաղեցնող (Մալականի այգին), վերադարձվել է համայնքին: 2009-ին 50 տարվա վարձակալության հանձնված այգին 2019-ին կրկին դարձավ համայնքին: Այգու վերականգնման համար որպես առաջնային քայլ, ոռոգման համակարգի անցկացման աշխատանքներն արդեն մեկնարկել են:</p>		
2	<p>Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով վերահսկողության իրականացում</p>	<p>Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով նախատեսվում է իրականացնել խիստ վերահսկողություն՝ նպատակ</p>	<p>Հաշվետու ժամանակահատվածում քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտում ապօրինի շինարարությունները բացառելու նպատակով իրականացված աշխատանքների արդյունքում Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում հայտնաբերվել և ապամոնտաժվել են թվով 118 ապօրինի իրականացված շինարարություններ և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ազատվել են ապօրինի տիրապետումից:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն, Երևանի քաղաքապետարանի</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		ունենալով կարգավորել ոլորտում առկա խնդիրները: Հսկողության խստացմանը զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել նաև հանրային լայն իրազեկում՝ ապօրինի շինարարության և հողազավթումների իրավական անխուսափելի հետևանքների վերաբերյալ: Կբացառվի ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը՝ նոր կառուցվող ապօրինի կառույցների նկատմամբ:		աշխատակազմի հասարակական կարգի պահպանման ծառայություն, Երևանի բոլոր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր:	
3	Քաղաքի զարգացման ռազմավարության և մշակում	Նախատեսվում է մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն	Մշակման աշխատանքները հնարավոր է Երևան քաղաքում կիրառվող տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթերի համակարգը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և հաստատված նախագծերի գործող համակարգի վերլուծության, դրա հիման վրա վերանայման անհրաժեշտությանը վերաբերվող հիմնավորման արդյունքներով: Նշված գործընթացները կախված են քաղաքաշինության կոմիտեի կողմից կատարվելիք իրավական և օրենսդրական փոփոխությունների հետ:	Երևանի քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>ն (City Development Strategy), որն ուղղված կլինի ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության բոլոր շերտերի կարիքների և կենսական պահանջումներն էրի բավարարմանը, քաղաքի կայուն և համաչափ զարգացմանը, տրանսպորտի և քաղաքային այլ ենթակառուցվածքների կարգավորմանը, կնպաստի քաղաքացի-քաղաքապետարան կապի ամրապնդմանն ու քաղաքացիների անմիջական մասնակցությանը քաղաքային կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների</p>			
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		կայացմանը և լուծմանը:			
4	Արևային էներգիայի և էներգախնայող համակարգերի օգտագործմամբ փողոցների լուսավորման ցանցի ընդլայնում	Նախատեսվում է արևային էներգիայի և էներգախնայող համակարգերի օգտագործմամբ ընդլայնել փողոցների լուսավորման ցանցը: Ծրագրի նպատակն է խթանել Երևան քաղաքում էներգաարդյունավետության և էներգախնայողության մակարդակի բարձրացմանը՝ օգտագործելով էներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:	Տես կոմունալ տնտեսության ոլորտ կետ 14 և 16-ը:	Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն	
5	Խցանումների նվազման նպատակով՝ երթևեկության ծանրաբեռնվածությունը բեռնաթափելուն ուղղված	Երթևեկության բեռնաթափման նպատակով նախատեսվում է կառուցել վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատե	Երևան քաղաքի Ստ.Շահումյան անվան հրապարակում ստորգետնյա ավտոկայանատեղերի ստեղծման հնարավորությունների վերաբերյալ բանակցություններ են ընթացել ներդրողների հետ, նախապատրաստվել է նաև «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներդրումների ներգրավման նպատակով նախնական Էսքիզային առաջարկ ստորգետնյա բազմաֆունկցիոնալ համալիրի և ավտոկայանատեղի կառուցման համար, որը տեղադրված է Երևան քաղաքի պաշտոնական կայքում http://www.yerevan.am/am/investment/construction-of-an-underground-	Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ /համակարգվող ստորաբաժանումներ/ , ճարտարապետությա ն և	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	միջոցառումների իրականացում	<p>դիներ: Վերջին տարիներին մայրաքաղաքում ավտոտրանսպորտային միջոցների քանակի աճը առաջացնում է ժամանակակից բազմաֆունկցիոն ալ ավտոկայանատեղերի կառուցման անհրաժեշտություն: Ծրագրի նպատակն է լուծել Երևան քաղաքում ավտոմեքենաների կայանման խնդիրը, բեռնաթափել ծանրաբեռնված երթուղիները և նպաստել խցանումների նվազմանը:</p>	<p>multifunctional-complex-and-parking-in-the-shahumyan-square/</p>	<p>քաղաքաշինության վարչություն և Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն</p>	
6	Միջազգային ստանդարտներին համապատասխան ստորգետնյա անցումների բարեկարգում	<p>Նախատեսվում է բարեկարգել առկա ստորգետնյա անցումները և ապահովել դրանց անվտանգությունը: Ծրագրի նպատակն է</p>	<p>1.Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող ստորգետնյա հետիոտն անցումների քաղաքաշինական տեսքի, տեխնիկական և սանիտարական վիճակի, լուսավորության, ինչպես նաև տարածքների և դրանցում գործող խանութների, կրպակների, տաղավարների վարձակալների կամ (փաստացի օգտագործողների) պայմանագրային պարտավորությունների կատարման ուսումնասիրման, առկա խնդիրների վերհանման և դրանց լուծումների ուղղությամբ տարվող աշխատանքների շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարվել է ստորգետնյա անցումների տարածքների չափագրման</p>	<p>1.Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն, «Քաղաքաշինություն» ՓԲԸ, Անշարժ գույքի</p>	<p>Երևանի քաղաքապետի կարգադրություն հ.651-Ա 12.12.2018թ. աշխատանքային խումբ ստեղծելու մասին</p>

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>Երևան քաղաքում ապահովել բարեկարգ և միջազգային ստանդարներին համապատասխան ստորգետնյա անցումների կառուցումը և անվտանգ շահագործումը: Անցումները հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, կլինեն լուսավորված և անվտանգ:</p>	<p>աշխատանքներ և նյութերը ՃՔ վարչության «Քաղաքաշինություն» ՓԲԸ գրություններով ուղարկվել են անշարժ գույքի վարչություն՝</p> <ol style="list-style-type: none"> 1.Մաշտոցի պողոտայի և Գր.Լուսավորիչի փողոցների խաչմերուկում /Մաշտոցի 1/3/, 2.Մաշտոցի պողոտայի 10/3 -շուկայի մոտ, 3.Իսակովի պող. 2/4, 4.Աբովյան և Կոբյուն փողոցների խաչմերուկի /հասցե Աբովյան փող. 48/13 5.Վարդանանց-Խանջյան փողոցների խաչմերուկ /հասցե Վարդանանց փող. 18/4 6.Տիգրան Մեծի պող. Այրարատ կ/թ մոտ 7.Կոմիտաս Ազատության պողոտա 8.Նալբանդյան փողոց 46/2 9.Բաղրամյան պողոտա 50/8 Կամոյի դպրոցի մոտ 10.Իսակովի պող. ստորգետնյա անցում 11.Գայի պող. հ.12/15 12.Գ.Նժդեհի փող. հ.16/1 շուկայի դիմաց 13.Մարշալ Բաղրամյան պող. հ.16/4 ստորգետնյա անցում <p>2.Մաշտոցի պողոտայի և Գր.Լուսավորիչ փողոցի խաչմերուկում գտնվող անցման վերաբերյալ կազմված փաթեթը ներկայացվել է աճուրդի 30.08.2019թ., սակայն չի կայացել, մասնակից չլինելու պատճառով:</p> <p>3.Ստորգետնյա հետիոտնային անցումներ են նորոգվել /նախագիծ Ծածկագիր ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/43 և հիմնանորոգում Ծածկագիր ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/131/</p> <ul style="list-style-type: none"> -Ազատության պողոտայի՝ Հաղթանակ զբոսազու մուտքին հարակից -Մարշալ Բաղրամյան մետրոյի կայարանի -Հալաբյան-Լենինգրադյան խաչմերուկում -Գրիգոր Լուսավորիչ փողոցի և Մաշտոցի պողոտայի խաչմերուկում գտնվող <p>4. Հասարակության փողոցի՝ Միլիկյան խճուղու հատման հատվածում վերգետնյա հետիոտնային անցման կառուցում Ծածկագիր 05.02.2019թ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/15 մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել և կնքվել է պայմանագիր «Մոնտաժտրանսշին»ՍՊԸ-ի հետ, Տրամադրվել է նախագծման</p>	<p>կառավարման վարչություն 2. Անշարժ գույքի կառավարման վարչություն 3., 4., 5.Շինարարության և բարեկարգման վարչություն, ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն 6. Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, «Անցումներ» ՍՊԸ</p>	
--	--	--	---	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>թույլտվություն, համաձայնեցվել է նախագիծ և Շինարարության թույլտվություն 31.05.2019թ.-ժամկետը-26.03.2020թ-«Մարգիս - Մարիաննա» ՍՊԸ, աշխատանքները կատարվել են:</p> <p>5. Երևան քաղաքի Սյասնիկյան պողոտայի հ 12ա հասցեի վերգետնյա հետիոտային անցման կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքները կատարվել են:</p> <p>Ծածակագիր ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/56, մրցույթը կայացել է 14.06.2019թ. հաղթող «Երևաննախագիծ» ՓԲԸ: Տրամադրվել է ՃՀԱ 13.09.2019թ. հ.01/18-07/2-86404-903</p> <p>6.Մ.Մաշտոցի պողոտայի և Փ.Բուզանդի, Արամի փողոցների հատման հատվածում(Մաշտոցի պող. 20/2 և 20/4 հասցեում) «Անցումմեկ» ՍՊԸ-ի կողմից ստորգետնյա հասարակական տարածքի և կից գետնանցումների վերակառուցման և վերանորոգման համար տրամադրվել է քանդման ենթակա /աստիճանների/ թույլտվություն, ժամկետը 12.06.2020թ.</p>		
7	4-րդ կարգի վթարային շենքերի վերաբնակեցման ծրագրի իրականացում	Նախատեսվում է 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների համար իրականացնել վերաբնակեցման ծրագրի՝ օգտագործելով սոցիալական բնակարանաշինության ոլորտում համայնք-մասնավոր հատված համագործակցության հնարավորություն	<p>1.Միասկյան 3 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի համար վերահամաձայնեցվել է նախագիծ 30.08.2019թ. հ.01/18-05/2-77801-846 և տրամադրվել շինարարության թույլտվություն: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են /ժամկետ 06.01.2020թ./</p> <p>2.Աջափնյակ վարչական շրջանում կառուցապատողների կողմից ներկայացված ներդրումային առաջարկների ուղղությամբ (Արզումանյան 10, 17 հասցեներ) պատրաստվել են եռակողմ (Երևանի քաղաքապետարան, բնակիչներ, կառուցապատող) պայմանագրային նախագծեր՝ առկա բնակելի ֆոնդից վթարային որոշակի շենքերի քանդումով նույն տեղում բազմաբնակարան բնակելի նոր շենքերի կառուցմամբ բարելավել բնակիչների պայմանները, ընթացել են քննարկումներ,բանակցություններ,սակայն բնակիչների կողմից առկա բնակարանների պահանջի պատճառով մշակված մոդելը առկախվել է:</p> <p>2.1 Արզումանյան 8ա հասցեում գտնվող 4-րդ կարգի վթարային շենքի հետ կապված մշակվել է ծրագիր Արզումանյան հ.8/1 հասցեում և հարակից հատվածում իրականացվելիք բազմաբնակարան շենքային համալիրի կառուցապատման շրջանակներում: «Նոբբի» ՍՊ ընկերության կողմից առաջարկվել է ներդրումային-սոցիալական ծրագիր ,որպես պետություն-համայնք-մասնավոր</p>	<p>1.Անշարժ գույքի կառավարման վարչություն, «Ինժգարանտ » ՍՊԸ, ՃՔ վարչ.</p> <p>2. Շինարարության և բարեկարգման վարչություն 2.1.ՀՀ կառավարություն, Անշարժ գույքի կառավարման և ՃՔ վարչություն, «Նոբբի»ՍՊԸ</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		ներք:	համագործակցություն, որը դեռևս քննարկման փուլում է:		
8	Երևանի Գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակում՝ մինչև 2030թ.	Նախատեսվում է Երևանի գլխավոր հատակագծի նախագծի մշակում՝ մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով. 1-ին փուլ՝ Երևանի մինչև 2030թ. քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում, Գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակում:	Նախապատրաստական միջոցառումների շրջանակներում կազմվել է քաղաքաշինական առաջադրանքը, որը քննարկումների փուլում է:	Երևանի գլխավոր ճարտարապետ, ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն	
9	Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի համալիր սխեմայի մշակում	Նախատեսվում է Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի մինչև 2030թ. զարգացման համալիր սխեմայի մշակում. 1-ին փուլ, Երևանի Գլխավոր հատակագծի իրագործման և ճանապարհատրանսպորտային	Երևանի 2019թ. զարգացման հաստատված ծրագրով նախատեսված տվյալ կետով միջոցառման համար 2019թ. բյուջեի ավելի ուշ քննարկման և հաստատման արդյունքում գումար չի նախատեսվել	ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն-մրցույթում հաղթող կազմակերպություն	2019թ. բյուջեի ավելի ուշ քննարկման և հաստատման արդյունքում ծրագրին գումար չի նախատեսվել

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		ցանցի զարգացման ընթացքի ուսումնասիրությունն և վերլուծություն:			
10	Երևանի Գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրություն	Նախատեսվում է իրականացնել Երևանի գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրություն և հաշվառում:	«Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծության աշխատանքների ձեռքբերում» 1. Երևանի քաղաքապետի կարգադրություն 02.04.2019թ. N290-Ս «ԵԲ-ԳՀԱՇՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին», 2. Հայտարարվել է մրցույթ Ծածկագիր ԵԲ-ԳՀԱՇՁԲ-19/7 08.04.2019թ. 3. Պայմանագիր- Ծածկագիր ԵԲ-ԳՀԱՇՁԲ-19/7 25.04.2019թ. Գլխավոր հատակագծի հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշներին վերաբերվող տեղեկատվության հավաքում, գլխավոր հատակագծի նախագծի իրագործման վերլուծություն, հաշվետվության մշակում: Ավարտվել է գլխավոր հատակագծի նախագծի իրագործման վերլուծությունը, թողարկվել է հաշվետվությունը:	Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն-մրցույթում հաղթող «Երևաննախագիծ» ՓԲԸ ժամկետը 25.04.2019թ.- 20.12.2019թ. Աշխատանքներն արվարտվել են և հանձնվել է Նախագիծ-հաշվետվությունը 17.12.2019թ. 3 օրինակ ու էլեկտրոնային կրիչով:	
11	Նոր Նորք վարչական շրջանի տարածքի գոտիավորման աշխատանքների իրականացում	Նախատեսվում է Երևանի Նոր Նորք վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքների իրականացում:	«Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի մշակման քաղաքաշինական աշխատանքների» 1. Երևան քաղաքի ավագանու N97-Ս 22.05.2019 թվականի որոշում՝ քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին 2. Երևանի քաղաքապետի կարգադրություն N683-Ս 11.07.2019թ. «ԵԲ-ԳՀԱՇՁԲ-19/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ձևավորելու մասին, 3. Հայտարարություն գնանշման հարցման մասին 11.07.2019թ. ծածկագիրը՝ ԵԲ-ԳՀԱՇՁԲ-19/68 4. Պայմանագիր՝ 07.08.2019թ. «ԵԲ-ԳՀԱՇՁԲ-19/68» հաղթող կազմակերպության «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հետ	Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն /հաղթող -«Երևաննախագիծ» ՓԲԸ ժամկետը 07.08.2019թ.- 20.07.2020թ.	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>Հավաքվել են ելակետային նյութերը, դրանց վերլուծությունն է կատարվել այդ թվում՝ տարածքի դիտագնում և լուսանկարում, հանույթի ճշգրտում, փոփոխությունների բացահայտում, հողահատկացումների տեղակայման սխեմայի մշակում, հենակետային հատակագծի մշակում, գոյություն ունեցող կառույցների վերլուծություն ըստ հարկայնության: Սկսվել է տարածքների վերլուծություն ըստ գործառնական նշանակության, գործառնական գոտիների նշանակության վերանայում ըստ վերջին տարիների կատարած հողահատկացումների: Կատարվել է վարչական շրջանի սահմանների ճշգրտում, պատրաստվել են նյութեր հասարակական լուսման համար: Կատարվել են պատմամշակութային հուշարձանների գոտիների ուսումնասիրություն, մշակվել է որոշ գոտիների պահպանական ռեժիմը: Աշխատանքները շարունակվելու են 2020թ.-ին:</p>		
12	Երևանի «Փոքր կենտրոնի» սահմանների նախագծի մշակում	Նախատեսվում է իրականացնել Երևանի «Փոքր կենտրոնի» սահմանների նախագծի մշակում («Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հաստատումից հետո):	Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքը դեռևս չի հաստատվել	Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն-մրցույթում հաղթող կազմակերպություն, ժամկետը-պայմանագիրը կնքելուց հետո 6 ամիս	Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքը դեռևս չի հաստատվել
13	«Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ուղղությամբ կառուցապատմա	«Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ուղղությամբ կառուցապատմա	<p>1. Կառուցապատողների կողմից շարունակվում են սկսված շինարարական, ինչպես նաև չիրականացված գույքերի օտարման աշխատանքները: ՀՈԱԿ-ի կողմից իրականացվել է չիրացված գույքերի նկարագրության արձանագրությունների կազմման աշխատանքները, համաձայն ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2018 թվականի N 1528-Ն որոշման</p> <p>2. Թաղամասի առկա վիճակի ամփոփման և հետագա</p>	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ Մասնավոր ներդրող	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>ն աշխատանքների իրականացում</p>	<p>ն աշխատանքներ կընթանան Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքներում՝ արդիականացնելով, ամրացնելով կիրառական ենթակառուցվածքները, ներգրավելով այն քաղաքի կենսագործունեության մեջ: Կառուցապատողների կողմից կշարունակվեն սկսված շինարարական, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշման վերանայման դեպքում ամբողջությամբ չիրականացված գույքերի</p>	<p>կառուցապատման աշխատանքների վերանայման նպատակով ՀՀ կառավարությունում իրավասու և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկումներ են տեղի ունեցել, ստեղծվել է հանձնաժողով:</p> <p>3. ՀՀ կառավարության 05.12.19թ. հ. 1728-Ն որոշմամբ երկարացվել է գույքերի օտարման ժամկետը ևս 1 տարով, սահմանելով 2020 թվականի դեկտեմբերի 31-ը</p>		
--	-----------------------------------	---	---	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		օտարման աշխատանքները:			
14	Ներդրողների ներգրավմամբ Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագրի իրականացում	Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագիրը կյանքի կոչելու համար ՀՀ կառավարության 22.03.2018թ. N332-Ն «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» որոշմամբ տարածքում իրականացվում է առկա գույքերի օտարման գործընթացը (որի համար սահմանված ժամկետ է 2023թ. հունվարի 1-ը): 2.Թաղամասի կենտրոնական հատվածի լոտի կառուցապատողի կողմից ներկայացված հայեցակարգային առաջարկ է քննարկվել:	1.Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագիրը կյանքի կոչելու համար ՀՀ կառավարության 22.03.2018թ. N332-Ն «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» որոշմամբ տարածքում իրականացվում է առկա գույքերի օտարման գործընթացը (որի համար սահմանված ժամկետ է 2023թ. հունվարի 1-ը): 2019 թվականին նախատեսվում է իրականացնել նշված աշխատանքները ներդրողների կողմից:	1. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ Մասնավոր ներդրող	
15	Համայնք-	Նախատեսվում է	1.Մոնթե Մելքոնյան փող. հ.31 հողամասում Մանկական,	Երևան քաղաքի	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

<p>մասնավոր հատված համագործակցության ծրագրերի շարունակական իրականացում</p>	<p>շարունակել համայնք-մասնավոր հատված համագործակցության ծրագրերի իրականացումը, մասնավորապես 1. Մոնթե Մելքոնյան փողոցի հարակից տարածքում Մանկական, Երիտասարդական, ընտանեկան հանգստի և ժամանցի կենտրոնի ստեղծման ներդրումային ծրագրի ուղղությամբ աշխատանքներ:</p> <p>2. ՀՀ կառավարության կողմից ընդունված ներդրումային ծրագրի առաջին փուլով նախատեսված Ամիրյան փողոցի մոտ բազմաբնակարան շենքի</p>	<p>Երիտասարդական, ընտանեկան հանգստի և ժամանցի կենտրոնի ստեղծման աշխատանքներն ընթացքի մեջ են:</p> <p>2.1 Ամիրյան 26/4 բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքների համար 01.12.2017թ. N01/18-Ա-8367-1184 տրված շինարարության թույլտվության վերաբերյալ 26.08.2019թ. ընդունվել է որոշում, գտնվում է վարույթում վարչական դատարանի, նիստ է նշանակված, 18.03.2020թ.:</p> <p>2.2 Անրի Վերնոյի փող. 3 «Թատրոնի նոր շենքի կառուցում»/ -Շինարարության թույլտվություն է տրամադրվել 05-04-2019 և ժամկետը մինչև 02.07.2020թ./</p> <p>3. Մոնթե Մելքոնյան փողոց հ.44 հասցեում բնակելի և հասարակական շենքերով թաղամաս</p> <p>-3.1 Նախագծման թույլտվություն 23.07.2018թ. հ. 01/18-07/2-53967-553 Բնակելի և հասարակական շենքերով թաղամասի կառուցում: 1-ից- 6 մասնաշենքերի կառուցում</p> <p>3.2-Շինարարության թույլտվություն 20.08.2019 հ.01/18-67455-1001 ժամկետը մինչև 19.08.2021թ./ Բնակելի և հասարակական շենքերով թաղամասի հ. 7 շենքի կառուցում -Նախագիծ 20.11.2019թ. հ. 01/18-05/2-101007-1195</p> <p>-3.3- Շինարարության թույլտվություն 20.11.2019թ. հ.01/18-101007-1504 /ժամկետը 20.11.2021թ./</p> <p>4. «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման նպատակով ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 1-ի N1215-Լ որոշումից բխող կառուցապատողի կողմից ներկայացվող և Երևան համայնքի հետ կապված հետագայում ենթադրվող գործառույթներ</p> <p>5. Երևան քաղաքի Շահումյան հրապարակում ստորգետնյա ավատակայանատեղերի ստեղծման հնարավորությունների վերաբերյալ բանակցություններ են ընթացել ներդրողների հետ, նաև «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներդրումների ներգրավման նպատակով նախնական Էսքիզային առաջարկ կա ստորգետնյա բազմաֆունկցիոնալ համալիրի և ավտոկայանատեղի կառուցման համար, որը տեղադրված է Երևան քաղաքի պաշտոնական կայքում</p> <p>6.1. «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը կհավակնի դառնալ Երևանի այցեքարտերից մեկը և մի քանի անգամ կմեծացնի</p>	<p>գլխավոր ճարտարապետ /համակարգվող ստորաբաժանումներ/</p> <p>1. «Պարկ Գրուպ» ՍՊԸ /ժամկետը 17.05.2020թ.</p> <p>2.1«Ջի Էմ Դեվելոփեր» ՍՊԸ ժամկետ էր սահմանված 01.12.2019թ.</p> <p>2.2«Ջի Էմ Դեվելոփեր» ՍՊԸ 2020թ.երկրորդ եռամսյակ</p> <p>3.«Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» ՀԿ</p> <p>4. Կառուցապատող</p> <p>5. Մասնավոր ներդրումներ</p> <p>6.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչություն</p> <p>7.1Երևան քաղաքապետարան և ՀՀ կառավարություն</p> <p>7.2Շինարարության և բարեկարգման վարչություն</p> <p>«Համաշին նախագիծ» ՍՊԸ ժամկետը 24.08.2019թ.</p>	
--	---	---	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>շինարարական աշխատանքների ավարտ և երկրորդ փուլով՝ Անրի Վերնոյի փողոցի մոտ Մոս Մարգարյանի անվան Համազգային թատրոնի շենքի կառուցման նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հիման վրա շինարարության սկիզբ:</p> <p>3. Մոնթե Մելքոնյան փողոցի հարակից տարածքում 6.5 հա մակերեսով հողամասում՝ «Վերածնունդ» երիտասարդական ավանի նախագծային փաստաթղթերի փուլային համաձայնեցումներ և շինարարական աշխատանքների մեկնարկ:</p> <p>4. «Ինժեներական քաղաք»-ի</p>	<p>այցելուների հոսքը:</p> <p>ՀՀ Երևան քաղաքի ավագանու 16.12.2019թ. N166-Ա «Երևան համայնքի «Ջոն և Մոսի Բայան հիմնադրամի» միջև Էրեբունի թանգարանի ընդհարձակ նախագծի վերաբերյալ համագործակցության պայմանագրին հավանություն տալու մասին» որոշում է ընդունվել:</p> <p>Ներդրումային ծրագրով նախատեսվում է թանգարանի անմիջապես հետնամասում կառուցել նոր՝ ժամանակակից տեխնոլոգիաներով մասնաշենք, որը ճարտարապետությամբ պետք է համահունչ լինի տարածքին, բայց միաժամանակ՝ հագեցած նորարարական տեխնոլոգիաներով: Այս հատվածում կտեղակայվեն նոր ցուցասրահներ, որտեղ կլինեն անիմացիոն ցուցադրություններ, և այցելուները Երևանի պատմությանը կծանոթանան վիրտուալ շրջագայությամբ: Տարածքում կբացվեն նաև գիտական լաբորատորիաներ: Շինարարության համար կհայտարարվի նախագծերի մրցույթ:</p> <p>6.2 Կարմիր բլուր հուշարձանի տարածքից տեղափոխվել է շուրջ 500 մեքենա շինարարական աղբ, մաքրվել է 1.7 հա տարածք: Քայլեր են ձեռնարկվում հնավայրի հանրահռչակման և Կարմիր բլուրը հետաքրքիր մշակութային, զբոսաշրջային վայր դարձնելու ուղղությամբ: Տարածքում պեղումներ է իրականացել հայ-ավստրիական համատեղ հնագիտական արշավախումբը: Կարմիր բլուրի հնարավոր չպեղված հատվածների զգալի մասը սկանավորվել է հատուկ գեոլոկացիոն համակարգերով, ինչը ևս մեծ հեռանկար կբացի հուշարձանի հետագա ուսումնասիրման համար:</p> <p>7.1. Ճոպանոդու ներդրմանն ուղղված 2019թ. հոկտեմբեր ամսին ՏԿԵՆ-ում կայացած խորհրդակցության արդյունքում «Դոպպելմայեր Մելքահենն» ՍՊԸ-ի Հայաստանյան գործընկեր «Ունիվերսալ բիզնես սոլուշանս» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ծրագիրը համապատասխան տեխնիկատնտեսական հիմնավորումների ներկայացմամբ քննարկվել է ՀՀ կառավարությունում և Երևանի քաղաքապետարանում:</p> <p>7.2 Երևան քաղաքի Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցները միացնող ճանապարհահատվածի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներն ավարտվել են /ծածկագիր և պայմանագիր ԵՔ-ԳՀԱՇԸԲ-19/45 25.06.2019թ. ժամկետը 24.08.2019թ. /</p>	<p>8. ճարտարապետությա ն և քաղաքաշինության վարչություն «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, ներդրողներ</p> <p>9. ՀՀ կառավարություն և Երևանի քաղաքապետարան, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ /համակարգվող ստորաբաժանումներ, նախագծային արվեստանոց</p> <p>10. Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ /համակարգվող ստորաբաժանումներ/, Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ, նախագծային արվեստանոց</p>	
--	---	--	---	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>ստեղծման ծրագրի ուղղությամբ աշխատանքներ:</p> <p>5. Վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղիների կառուցման նպատակով ներդրողների հետ բանակցությունների վարում (Շահումյանի, Մախարովի, Ռուսաստանի հրապարակներում):</p> <p>6. «Էրեբունի», «Կարմիր Բլուր» և «Շենգավիթ» պատմահնագիտական արգելոց-թանգարանների վերակառուցման (զբոսաշրջիկների սպասարկման կենտրոնների կառուցմամբ) ծրագրերի ուղղությամբ աշխատանքներ:</p> <p>7. Նախատեսվում են «Զվարթնոց» օդանավակայան</p>	<p>8. Ծովակալ Իսակովի պողոտայից մինչև Արշակունյաց պողոտա՝ Մոնթե Մելքոնյան փողոցի շարունակություն հանդիսացող այդ նախագծային ճանապարհի նախագծային փաթեթը մշակվել է նախորդ տարիներին «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից:</p> <p>Իրականացման նպատակով (N2491-Ա 18.07.2019թ. Երևանի քաղաքապետի որոշում «Աշխատանքային խումբ ստեղծելու մասին») նախնական ուսումնասիրություններ են կատարվում «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի կողմից: Նախատեսվող թաղամասի միասնական կառուցապատման հատակագծի մշակման և բաժանված հատվածներով ներդրումային առաջարկ-նախագծերի կազմման համար առաջարկվել է այդ ճանապարհիին հարող տարածքի գոտևորման նախագծի և կառուցապատման էսքիզային նախագիծ մշակել /նախատեսվել է Երևան քաղաքի զարգացման 2020թ. ծրագրով/:</p> <p>9. Մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման նպատակով Աջափնյակ վարչական շրջանում Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման ու հարակից տարածքի կառուցապատման ծրագրի / «<i>Բազմաֆունկցիոնալ բարձրահարկ կառույցներով, ստորգետնյա ավտոկայանատեղով և բազմաֆունկցիոնալ առևտրի կենտրոնով համալիր</i>»/ նկատմամբ հետաքրքրություն է ցուցաբերվել ներդրողների կողմից և դրա հետագա իրականացմանն ուղղված բազմակողմանի քննարկումների անցկացման նպատակով ՀՀ կառավարությունում աշխատանքային խումբ է ստեղծվել նույն բեր ամսին:</p> <p>10. Երևան քաղաքի կենտրոնում մեծածավալ վերակառուցման և կառուցապատման աշխատանքներ նախատեսող թաղամասերի առկա վիճակի ամփոփման և հետագա կառուցապատման հարցերի վերանայման, թեմաներով անցկացվել են մի շարք քննարկումներ, թե Երևանի քաղաքապետարանում, թե ՀՀ կառավարությունում իրավասու և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնց կողմից տրված աշխատանքների արդյունքները նկատի առնելով կընդունվեն համապատասխան որոշումներ առաջիկա տարիների աշխատանքները ծրագրավորելու համար</p> <p>10.1 «Կոնդ» թաղամասի համար Երևանի քաղաքապետարան ներկայացված մի շարք կառուցապատողների առաջարկների քննարկման, հնարավոր և իրատեսական տարբերակների ընտրության,</p>		
--	---	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>տանող նոր տրանսպորտային հաղորդակցուղու, Կոմիտասի պողոտային զուգահեռ այլընտրանքային ճանապարհի կառուցման, ինչպես նաև նոր ճոպանուղային ցանցի ստեղծման նպատակով հետազոտական աշխատանքներ:</p> <p>8. Ծովակալ Իսակովի պողոտայից մինչև Արշակունյաց պողոտա՝ Կենտրոնը շրջանցող ճանապարհի (այն հանդիսանում է կառուցված՝ Իսակովի պողոտան Լենինգրադյան փողոցին կապող մայրուղու անմիջական շարունակությունը, ինչն իր մեջ ներառելու է Արշակունյաց</p>	<p>քաղաքաշինական հայեցակարգի մշակման առաջադրանքի ձևավորման և մրցութային փաթեթի կազմման անհրաժեշտությունից ելնելով ստեղծվել է հանձնաժողով (N695-Ա 12.06.2019թ. Երևանի քաղաքապետի կարգադրություն «Երևան քաղաքի կոնդ թաղամասի նախատեսվող վերակառուցման, կառուցապատման աշխատանքների հետ կապված խնդիրների լուծման նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին»)</p> <p>10.2. Գր. Լուսավորիչ եկեղեցու հարակից տարածքը վերակառուցելու և ժամանակակից թաղամաս ստեղծելու նպատակով:</p> <p>Կազմվել է Գր. Լուսավորիչ եկեղեցուն հարակից տարածք (Կորի փողոցի մոտ-Կրիվոյ թաղ.) թաղամասի վերակառուցման ծրագրի իրականացման համար նախագծային առաջարկության փաթեթ:</p> <p>Մշակվել է տվյալ թաղամասի միասնական կառուցապատման հատակագիծ՝ ճարտարապետական մեկ համալիր, որը բաժանված հատվածներով հնարավոր է ներկայացնել ներդրողներին: Այն ներդրումների ներգրավման նպատակով նախապատրաստված նախագծային առաջարկությունների փաթեթներից է, որը զետեղվել է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում նախատեսված առանձին հարթակում:</p> <p>(http://www.yerevan.am/am/investment/multifunctional-residential-public-and-hotel-development/)</p> <p>Մեկնարկել են տարածքը հանրության գերակա շահ ճանաչելու նպատակով ՀՀ Կադաստրի կոմիտե հարցումների աշխատանքները՝ տարածքում ընդգրկված գույքերի սեփականատերերի վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու նպատակով:</p>		
--	--	---	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>պողոտայի վրա նախատեսված հանգույցի և Հրազդան գետի վրայով անցնող նոր կամրջի կառուցում) շինարարության հնարավորության ստեղծում (նախագծային փաթեթը մշակված է):</p>			
16	<p>Երևան քաղաքի հանգստի նոր գոտիների հիմնում, առկա այգիների և զբոսայգիների վերականգնում</p>	<p>Նախատեսվում է աշխատանքների իրականացում Երևան քաղաքի հանգստի նոր գոտիների հիմնման, առկա այգիների և զբոսայգիների վերականգնման ուղղությամբ:</p>	<p>1. Երևան քաղաքի Օդակաձև զբոսայգու 3-րդ հատվածի բարեկարգման աշխատանքների կատարման նպատակով -Մրցույթի փաթեթ է նախապատրաստվել և հայտարարվել 14.03.2019թ. Ծածկագիր ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/42 -Պայմանագիր 24.05.2019թ. Ծածկագիր ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/42 -1.1 Նախագծման թույլտվություն 10.05.2019թ. հ. 01/18-07/2-39090-370 -1.2 Նախագիծ համաձայնեցված 31.05.2019թ. հ. 01/18-05/2-44984-458 -1.3 Շինարարության թույլտվություն 31.05.2019թ. հ.01/18-44984-539 /ժամկետը 27.12.2019թ./ Բարեկարգման աշխատանքներն ավարտվել են: 2. Շահագործման է հանձնվել Երևանի 2800-ամյակի այգին: Վարդանյան ընտանիքը 99 տարով իր վրա է վերցրել նաև այգու պահպանումը 3. Վերակառուցումից հետո մայրաքաղաքում շահագործման է հանձնվել Երևանի գլխավոր պողոտայի վերջնամասում (Մարյան-Մաշտոցի պողոտա) գտնվող այգին: Այգու բարեկարգման աշխատանքներն սկսվել են 2015 թվականին: 4. «Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասում, Նուբարաշեն խճուղու հարևանությամբ և Մարալանջի տարածքում անտառ պաշտպանիչ գոտու ստեղծման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ» -Պայմանագիր 16.08.2019թ. ծածկագիր ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/93</p>	<p>1. Շինարարության և բարեկարգման վարչություն «Մավշին» ՍՊԸ 24.05-20.08.2019թ., 1.1,1.2, 1.3 - Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ /համակարգվող ստորաբաժանումներ/ 2. «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ 3. «Տաշիր» ընկերությունների խումբ 4. Բնապահպանության վարչություն,</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի հետ Աշխատանքներն ավարտվել են:</p> <p>5. Նորաստեղծ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային հիմնարկը կզբաղվի կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանության խնդիրներով:</p>	<p>հաղթող «Երևաննախագիծ» ՓԲԸ, 5. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային հիմնարկ</p>	
17	<p>Ճանապարհների շինարարական աշխատանքների իրականացում</p>	<p>Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրով, անվտանգ և հարմարավետ ճանապարհային ցանց ստեղծելու նպատակով Երևանում շարունակվելու են նախորդ տարիներից մեկնարկած ծրագրով միջազգային չափանիշներին համապատասխանող ճանապարհների շինարարության հետ կապված աշխատանքները:</p>	<p>Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրով ներկայումս իրականացվում են</p> <p>1. Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները: Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարությունը ընթացքի մեջ է: Շինարարական աշխատանքների ավարտին նորակառույց ճանապարհահատվածի երկարությունը կկազմի 9,4 կմ, երթևեկելի հատվածի միջին լայնությունը՝ 24 մ: Ճանապարհահատվածը կլինի երկկողմանի երթևեկությամբ, կունենա 4-6 երթևեկության գոտի, 4 հիմնական ուղեանցեր և 1 ճանապարհային հանգույց:</p> <p>2. Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի մրցույթն ամփոփվել է: Հաղթող է ճանաչվել իսպանական Լևանտինա ընկերությունը: Կնքվել է շինարարական աշխատանքների իրականացման համապատասխան պայմանագիր 2019 թվականի հուլիսի 16-ին: Շինարարական աշխատանքները սկսվել են 2019 թվականի սեպտեմբերին:</p>	<p>Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի» ՀՈԱԿ ԲԲաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները իրականացվում են իտալական Տիրենա Սքավի ընկերության կողմից: Նախատեսվում է ավարտել 2020 թվականին:</p> <p>ԱԱրգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի շինարարական</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		Ծրագրում ընդգրկված են Արգավանդ-Շիրակի փողոց և Բաբաջանյան-Աշտարակի խճուղի ճանապարհահատվածները: Բաբաջանյան-Աշտարակ Արգավանդ-Շիրակ		աշխատանքների իրականացման ժամկետը 21 ամիս է հաշվարկված 2019 թվականի սեպտեմբերի 6-ից:	
18	Տրանսպորտային հանգույցների նախագծահաշիվային փաստաթղթերի փաթեթների մշակում	Նախատեսվում են իրականացնել տրանսպորտային հանգույցների նախագծանախահաշիվային փաստաթղթերի փաթեթների մշակման աշխատանքներ, մասնավորապես՝ Արշակունյաց պող. և Գ.Նժդեհի փողոցի հատման մասում՝ «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկում տրանսպորտային հանգույցի նախագծային	Երևան քաղաքի զարգացման 2020թ. տարեկան և 2019-2023 թվականների հնգամյա ծրագրերի նախագծերը կազմելիս Մոնթե Մելքոնյան փողոցի շարունակություն հանդիսացող Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող նախագծային ավտոմայրուղու կառուցումը առաջնահերթ աշխատանք է ընդունվել, փուլային կերպով հարցին լուծում տալու և կարճաժամկետ կտրվածքի դիտարկմամբ, դրանից հետո հնարավորին համարելով Արշակունյաց պողոտայի մնացած հանգույցների թեմաներին անդրադառնալը:	Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակի» ՀՈԱԿ	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		տարբերակի հատակեցում: Արշակունյաց պող. Բագրատունյաց պողոտա (Աշխատանքի հրապարակ) խաչմերուկում տրանսպորտային հանգույցի նախագծային տարբերակի հատակեցում:			
19	Երևան քաղաքի թաղամասերի և բնակարանային ֆոնդի արդիականացման ծրագրի մշակում	Նախատեսվում է Երևան քաղաքի թաղամասերի և բնակարանային ֆոնդի արդիականացման ծրագրի մշակում, որը պետք է նախատեսի՝ Բնակելի շենքերի հաշվառում, անձնագրավորում և շենքերի ու շինությունների անձնագրային տվյալների միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծում,	Երևանի 2019թ. զարգացման հաստատված ծրագրով նախատեսված տվյալ կետով միջոցառման համար 2019թ. բյուջեի ավելի ուշ քննարկման և հաստատման արդյունքում գումար չի նախատեսվել:	Ճարտարապետության և և քաղաքաշինության վարչություն	2019թ. բյուջեի ավելի ուշ քննարկման և հաստատման արդյունքում ծրագրին գումար չի նախատեսվել

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>Տիպարային և անհատական նախագծերով կառուցված բնակելի շենքեր ճակատների երեսպատում և տաքացում, Տիպարային և անհատական նախագծերով կառուցված բնակելի շենքեր ուղղաձիգ կանաչապատում, Տիպարային և անհատական նախագծերով կառուցված հարթ տանիքներով բնակելի շենքեր տանիքների բարեկարգում, կանաչապատում և օգտագործում որպես հանգստի գոտիներ, Արևային էներգիայի օգտագործում, Բնակելի խմբերի և թաղամասերի բակերի վերակառուցում և բարեկարգում,</p>			
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		Բնակելի ֆոնդի նորացում՝ 3-րդ և 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան բնակելի և հանրակացարանային շենքերի հիմնախնդիրների շարունակական լուծում, առաջին զանգվածային տիպարային բնակելի շենքերի և թաղամասերի վերակառուցման հիմնախնդիրների լուծում:			
--	--	--	--	--	--

Արտաքին ձևավորում և գովազդ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Գովազդային տարածքների հաշվառման,	Նախատեսվում է իրականացնել գովազդային	2019 թվականին իրականացվել է վարչական շրջաններում առկա գովազդների գույքագրման և չափագրման աշխատանքներ: 2019 թվականին հաստատվել են թվով 2920 հատ գովազդային	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն,	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	չափազրման, իրավական դաշտին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքների իրականացում	տարածքների հաշվառման, չափազրման, իրավական դաշտին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքներ Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովման նպատակով:	Էսքիզներ: 2019 թվականին արտաքին գովազդի տուրքը սահմանվել է 1.296.908.500 դրամ, հավաքագրվել է 1.535.426.300 ՀՀ դրամ: Գերակատարվածը կազմել է 238.517.800 դրամ:	Վարչական շրջաններ, Գովազդային կազմակերպություններ (հունվար-դեկտեմբեր)	
2	Արտաքին ձևավորման միասնական չափանիշների մշակում	Նախատեսվում է մշակել արտաքին ձևավորման միասնական չափանիշներ՝ մասնագիտական խմբերի և բնակիչների մասնակցության ապահովմամբ:	Քաղաքային և հանրապետական միջոցառումների ժամանակ աշխատանքներ են իրականացվել արտաքին ձևավորման միասնական չափորոշիչներ, դիզայներական լուծումներ սահմանել համագործակցելով բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների հետ:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն (հունվար-դեկտեմբեր)	
3	Գովազդային վահանակների փոխարինում	Նախատեսվում է իրականացնել գովազդային վահանակների փոխարինում քաղաքային չափերի գովազդային վահանակներով:	2019 թվականին գովազդային կազմակերպությունների հետ տեղի ունեցած բանակցությունների արդյունքում գանձվել են գովազդային վահանակների զբաղեցրած հողամասերի կառուցապատման վճարներ:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, գովազդային մասնագիտացված կազմակերպություններ (հունվար-դեկտեմբեր)	
4	Գովազդի ամենամյա միջազգային	Նախատեսվում է իրականացնել համապատասխան	Աշխատանքները չեղարկվել են:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	Ֆինանսավորում չլինելու պատճառով

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	փառատոնի կազմակերպում	աշխատանքներ ուղղված արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնի կազմակերպմանը:			
5	Գովազդային անձնագրերի կազմում	Նախատեսվում է կազմել 100 շենքերի գովազդային անձնագրեր որով կհաստակեցվի արտաքին գովազդի տեղադրման վայրը, գունային լուծումները, ինչպես նաև գովազդային վահանակների արտաքին տեսքը և մակերեսները:	2019 թվականին վերջնական տեսքի է բերվել թվով 100 հատ շենքերի գովազդային անձնագրեր թղթային տարբերակով: 2020 թվականին կիրականացվի 100 շենքերի համապատասխանեցումը գովազդային անձնագրերի:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	
6	Գովազդային վահանակների արդիականացում	Մասնագիտացված գովազդային կազմակերպությունների հետ գովազդային վահանակների արդիականացման աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:	2019 թվականին հանդիպումներ են տեղի ունեցել գովազդային գործակալությունների ներկայացուցիչների հետ քննարկելով գովազդային վահանակների արդիականացման հետ կապված հարցեր	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, գովազդային մասնագիտացված կազմակերպություններ (հունվար-դեկտեմբեր)	
7	Սոցիալական գովազդների տեղադրում	Սոցիալական գովազդների տեղադրումը	2019 թվականին համայնքային հանձնաժողովի կողմից թվով 47 հատ գովազդներ ճանաչվել են սոցիալական բնույթի, իսկ թվով 7 հատ գովազդ չի ճանաչվել սոցիալական բնույթի:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն,	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		կիրականացվի համայնքային և/կամ պետական հանձնաժողովի կողմից այդպիսին ճանաչվելուց հետո:		Համայնքային հանձնաժողով (հունվար-դեկտեմբեր)	
8	Ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքների իրականացում	Կշարունակվեն օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքները, կշարունակվի խիստ հսկողությունը մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայտնաբերման օրենսդրության պահանջներին համապատասխան եցնելու նպատակով:	ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/8 2019 թվականին ընթացքում ապամոնտաժվել է թվով 1913 հատ ապօրինի տեղադրված գովազդային վահանակներ և գովազդների հայտնաբերման գրվածքներ թվով 476 հատ համապատասխանեցվել են օրենսդրության պահանջներին:	«Վահրամ Գրիգորյան»Ա/Ձ 02.04.2019թ. Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, վարչական շրջաններ (հունվար-դեկտեմբեր)	
9	Կամարանցումների վերանորոգման և գունազարդման աշխատանքների	Կիրականացվի կամարանցումների վերանորոգում և գունազարդում՝	Ուսումնասիրվել են Երևան քաղաքի վերանորոգված ու գունազարդված կամարանցումները, առանձնացվել են վնասված կամարանցումների հասցեները, որոշվել է վնասի չափը: Աշխատանքները չեղարկվել են:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	Ֆինանսավորում չլինելու պատճառով

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	իրականացում	Երևանի կամարանցումների պատշաճ և գեղեցիկ տեսքն ապահովելու նպատակով: Կիրականացվի կամարանցումների գույքագրման աշխատանքներ, կսահմանվի դրանց վնասվածության աստիճանը, որի հիման վրա կիրականացվեն վերանորոգման և գունազարդման աշխատանքներ:			
10	Պանելային շենքերի ճակատների գունազարդման աշխատանքների իրականացում	Նախատեսվում է կյանքի կոչել պանելային շենքերի ճակատների գունազարդման աշխատանքները:	Աշխատանքները չեղարկվել են:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	Ֆինանսավորում չլինելու պատճառով
11	Վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորման աշխատանքների իրականացում	Ելնելով մայրաքաղաքի համաչափ զարգացման սկզբունքից՝ շարունակվելու է վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորումը, որի	Աշխատանքները չեղարկվել են:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	Ֆինանսավորում չլինելու պատճառով

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		շրջանակներում վարչական շրջանների կողմից իրականացվելու են նկարագարողման աշխատանքներ բակային տարածքներում:			
12	Նոր լանդշաֆտային էսքիզների ձևավորում	Լանդշաֆտների ձևավորման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է նոր լանդշաֆտային էսքիզների ձևավորում, այդ թվում նախատեսվում է տեղադրել նոր տիպի ծաղկամաններ, բազրիքներ, խոտածածկերի և ծառերի համար նախատեսված մետաղյա ցանկապատեր և այլն:	Կազմվել է Սարալանջի խճուղու կանաչապատման վիզուալիզացիան:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն, Բնապահպանության վարչություն (հունվար-դեկտեմբեր)	
13	Քաղաքային կահույքի արդիականացում	Երևան քաղաքի փողոցների, հրապարակների, այգիների կահավորման նպատակով նախատեսվում է	<ol style="list-style-type: none"> 1. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/9 2. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/87 3. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7-1 4. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7-2 5. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7-3 6. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/15 7. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/38 	<ol style="list-style-type: none"> 1.«Շինպլատֆորմ» ՍՊԸ 29.03.2019թ 2.«Ձևավորում» ՓԲԸ 06.08.2019թ. 3.«Նիկոլ Դուման» ԱԿ 20.08.2019թ. 	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>համայնք-մասնավոր հատված համագործակցության արդյունքում քաղաքային կահույքի արդիականացման աշխատանքներ, նոր նստարանների, աղբամանների գնում և տեղադրում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում հաշվի առնելով երևանյան ոճի տարրերը: Կտեղադրվի շուրջ 130 գրուցարան:</p>	<p>2019 թվականին ընթացքում իրականացվել է թվով 300 հատ անվճար հայտարարությունների տախտակների գույքագրման և վերանորոգման աշխատանքները: Իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ Նստարանի ամբողջական վերանորոգում 50 հատ, Նստարանի մասնակի վերանորոգում 700 հատ Աղբամանի ամբողջական վերանորոգում 100 հատ Աղբամանի մասնակի վերանորոգում 900 հատ</p> <p>Գնվել է թվով 500 հատ «Երևան» գրվածքով նստարան և 30.12.2019թ,-ի դրությամբ տեղադրվեն են 359 հատ «Երևան» գրվածքով նստարան Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում: 141 հատ «Երևան» գրվածքով նստարան ի պահ է տրվել Երևանի քաղաքապետարանին՝ 2020 թվականի ընթացքում տեղադրելու համար:</p> <p>Գնվել է թվով 600 ձուլվածքով աղբաման և 30.12.2019թ,-ի դրությամբ տեղադրվեն են 351 հատ ձուլվածքով աղբաման Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում: 249 հատ ձուլվածքով աղբաման ի պահ է տրվել Երևանի քաղաքապետարանին՝ 2020 թվականի ընթացքում տեղադրելու համար:</p> <p>Գնվել է թվով 200 մետաղյա դույլ և 30.12.2019թ,-ի դրությամբ տեղադրվեն են 173 հատ մետաղյա դույլ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում: 27 հատ մետաղյա դույլ ի պահ է տրվել Երևանի քաղաքապետարանին՝ 2020 թվականի ընթացքում տեղադրելու համար:</p> <p>Գնվել է թվով 400 հասարակ նստարան և 30.12.2019թ,-ի դրությամբ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններին են տրամադրվել 371 հատ հասարակ նստարան: 29 հատ հասարակ նստարան ի պահ է տրվել Երևանի քաղաքապետարանին՝ 2020 թվականի ընթացքում վարչական շրջաններին տրամադրելու համար:</p> <p>Իրականացվել են ամսական կտրվածքով թվով 529 հատ հիմնային պատվանդանների դրոշների փոխման, մաքրման և սպասարկման</p>	<p>4.«Բելմետ» ՍՊԸ 20.08.2019թ. 5.«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ 20.08.2019թ. 6.«Գործ-555» ՓԲԸ 30.08.2019թ. 7.«Շինպլատֆորմ» ՍՊԸ 29.03.2019թ</p>	
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			աշխատանքներ:		
14	Մետաղյա հենասյուների վերանորոգում	Մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով ներկման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մետաղյա հենասյուները զերծ պահել գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներ և հայտարարություններ կպցնելուց, կպահպանվի նաև սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:	Աշխատանքները չեղարկվել են:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն	Ֆինանսավորում չլինելու պատճառով
15	Մշակված հայեցակարգի և ընդհանուր պահանջների կիրառմամբ լոգոտիպերի մշակում	Նախատեսվում է լոգոտիպերի մշակում, տարբեր միջոցառումների ժամանակ քաղաքի տոնական ձևավորման նպատակով`	Հունվարի 28-ի լոգոտիպ Մարտի 8-ի լոգոտիպի մշակում Ապրիլի 7-ի լոգոտիպի մշակում «Երևանյան ամառ» լոգոտիպի մշակում	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն (հունվար-դեկտեմբեր)	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		նախորոք մշակված հայեցակարգի և գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների կիրառմամբ:			
16	Թեմատիկ բաներների, հրավիրատոմսերի , շնորհակալագրերի կազմում	Նախատեսվում է շարունակել տոնական միջոցառումների, թեմատիկ բաներների, հրավիրատոմսեր շնորհակալագրերի, տաղավարների, ֆլայերների, ինստալյացիաների, ստիկերների ձևավորումն ու կազմումը:	<ol style="list-style-type: none"> 1. Հունվարի 28՝ Բանակի տոնին նվիրված բաներ 2. Բարեկենդանի օրվան նվիրված բաների կազմում 3. Ավտոկայանատեղիների թույլատրող նշանների նախագիծ-առաջարկ 4. Շինարարական բաների էսքիզային տարբերակների մշակում 5. Շինհրապարակների արգելափակոցների էսքիզային տարբերակների մշակում 6. Զարգացման ծրագրի բուկլետի ձևավորում կազմում 7. Ապրիլի 7՝ բաների ձևավորում, Միրահարների այգու տարածքի ձևավորման նախագիծ-առաջարկ 8. Եվրոպայի հրապարակի անվանակոչման վահանակի էսքիզ, որոշման ձևավորում 9. Երևանի քաղաքապետարանի երկու մասնաշենքերի Մեկ պատուհանի ժամանակացույցերի վահանակի պատրաստում 10. Երևանի քաղաքապետարանի առաջին տեղակալի բլանկի կազմում, 11. Ավան վարչական շրջանի ղեկավարի և ղեկավարի տեղակալի բլանկի կազմում, 12. Երևանյան ամառվա լոգոյով դրոշների պատրաստում 13. Երևանի քաղաքապետարանի մեկ պատուհանի աշխատակիցների համազգեստի էսքիզ 14. Հեծանվականգառների էսքիզ 15. Էկո գրիչների էսքիզ 16. Արգելապատնեշների ձևավորման էսքիզ 17. Փողոցների և շենքերի անվան ու համարակալման ցուցանակների էսքիզ 18. Տեղական հարկերի վճարման օգտակարության վերաբերյալ 	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն (հունվար-դեկտեմբեր)	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		սոցիալական գովազդի բաներների էսքիզ 19. Երևանի քաղաքապետի և աշխատակազմի քարտուղարի ամանորյա շնորհավորական բացիկի դիզայն 20. Կոնֆետների տուփերի ձևավորում		
--	--	--	--	--

Շինարարություն և բարեկարգում

Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Ասֆալտապատման, փոսային նորոգման և ճաքալցման, գրունտային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացում	Հաշվի առնելով վարչական շրջանների համաչափ զարգացման քաղաքականությունը՝ 2019թ. մայրաքաղաքում ասֆալտապատման աշխատանքներ կիրականացվեն բոլոր 12 վարչական շրջանների փողոցներում, բակերում, մայրերում, ինչպես նաև առկա գրունտային ճանապարհներին: Նախատեսվում է իրականացնել շուրջ 650 հազ. քմ	1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17-1 2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17-2 3. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17- 4. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17-4 5. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17-5 6. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17-6 7. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17-7 8. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/17-8 9. ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/6 10. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/85 2019թ. ծրագրով նախատեսված Երևան քաղաքի փողոցների, մայրերի և բակային տարածքների ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգման, փոսային նորոգման և ճաքալցման, հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներն ավարտվել են: Կատարվել է . 815023քմ ասֆալտապատման, 402187զծմ ճաքալցման, 10045քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:	1. «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ 03.06.-01.11.19թ. 2. «Շինպլյուս» ՍՊԸ 05.06.-25.12.19թ. 3. «Արհովշին» ՍՊԸ 05.06.-01.11.19թ. 4. «Նարիմանյան» ՍՊԸ 06.06.-01.11.19թ. 5. «Կապավոր» ՍՊԸ 29.05.-01.11.19թ. 6. «Լիլիթ-87» ՍՊԸ 03.06.-25.12.19թ. 7. «Սահակյանշին» ՓԲԸ (ճաքալցում) 06.06.-30.10.19թ. 8. «Արարատ-Ճանշին» ՍՊԸ (գրունտային) 03.06.-25.12.19թ. 9. «Արհովշին» ՍՊԸ	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի 20%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում, 80%-ը գլխավոր և երկրորդական փողոցներում և մայթերում, ինչպես նաև շուրջ 5,000քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ: Փողոցների պատշաճ մակարդակը պահպանելու նպատակով կշարունակվեն անհրաժեշտ ծավալի ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգման և շուրջ 400 հազ.գծմ ճաքալցման աշխատանքները:</p>		<p>06.09-30.11.19թ. 10. «Ռուբիկ և Իշխան» ՍՊԸ (գրունտային) 30.07-15.10.19թ.</p>	
2	Հենապատերի վերանորոգում	Հենապատերի վերանորոգման աշխատանքների ծրագիրը	<p>1.ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/13 2.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/76 Աշխատանքներն ավարտվել են, վերանորոգվել են թվով 41 հենապատեր:</p>	<p>1.«Կամպարե» ՍՊԸ 01.03-25.12.19թ. 2.«Երկնաքեր» ՍՊԸ</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>շարունակական է: 2019թ. ևս կիրականացվեն հենապատերի ընթացիկ և տեղային նորոգման աշխատանքներ: Մեծածավալ նորոգման կարիք ունեցող հենապատերի դեպքում ըստ անհրաժեշտության կպատվիրվեն նախագծանախահաշվային փաստաթղթեր:</p>		25.07-01.11.19թ.	
3	Վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցում և նորոգում	<p>Ներկայումս հաշվառված է մոտ 40 հասցե, որտեղ նպատակահարմար է կառուցել վերգետնյա անցումներ: 2019թ. նախատեսվում է կառուցել 2 վերգետնյա անցում՝ Թբլիսյան խճուղի շամպայն գինիների գործարանի մոտ, Աջափնյակ վարչական շրջանի Հասրաթյան փողոց գերեզմաններ տանող</p>	<p>1.ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/15 Հասրաթյան փողոցի՝ գերեզմաններ տանող ճանապարհի մոտ վերգետնյա հետիոտնային անցումի կառուցման աշխատանքներն ավարտվել են: 2. Վերանորոգվել են թվով 3 ստորգետնյա հետիոտնային անցումներ. 2.1 ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/131-1՝ Ազատության պողոտայում, 2.2 ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/131-2՝ Հալաբյան-Լենինգրադյան խաչմերուկում 2.3 ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/131-3՝ «Մարշալ Բաղրամյան» մետրոյի կայարան</p>	<p>1.«Մոնտաժտրանսշին» ՍՊԸ 11.04.-30.08-29.09.19թ. 2. «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ 14.11.-25.12.19թ. «ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ 11.11.19թ-23.02.20թ. «Տ-ՔՆՍԹԴԱՔՇՆ» ՓԲԸ 14.11.-25.12.19թ.</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>ճանապարհի մոտ: Վարձակալությամբ տրված ստորգետնյա հետիոտն անցումներում նախատեսվում է իրականացնել ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ՝ վարձակալների հետ համագործակցությամբ: Գույքագրման աշխատանքների ավարտից հետո կհստակեցվի վերանորոգման առավել կարիք ունեցող գետնացումների ցանկը:</p>			
4	Թեքահարթակների կառուցում	<p>Թեքահարթակների կառուցման ծրագիրը շարունակական է: 2019թ. նախատեսված է կառուցել շուրջ 180 թեքահարթակ, կտեղադրվեն նաև վատ տեսողություն ունեցող քաղաքացիների</p>	<p>1.ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/5 2.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/78 Աշխատանքներն ավարտվել են: Կառուցվել են 226 թեքահարթակներ, վերանորոգվել 14-ը և 34 տեղերում տեղադրվել են հատուկ դեղին գույնի գոգավոր սալիկներ՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար:</p>	<p>1.«Կոտայք Շին» ՍՊԸ 07.03.- 31.08.19թ. 2. «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ 29.07-01.10.19թ.</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>համար նախատեսված հատուկ սալիկներ:</p>			
<p>5</p>	<p>Մայթերի և եզրաքարերի վերանորոգում</p>	<p>Մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքները կշարունակվեն նաև 2019 թվականին:</p>	<p>1.ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/4 2.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/77 3.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/105 4. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/6 5. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/80 6. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/76 7. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/95 Աշխատանքներն ավարտվել են: Կատարվել են 3202քմ մայթերի սալիկապատման աշխատանքներ, 4264գծմ բետոնե և բազալտե եզրաքարերի վերանորոգման և նորերի տեղադրման աշխատանքներ:</p>	<p>1. «ՅԴ ԿԱԴ» ՍՊԸ 22.02-20.12.19թ.- <u>պայմանագիրը</u> <u>լուծարվել է</u> 2.«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ 01.08-01.11.19թ. 3. «ՋԻԹԻԷՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 05.09-20.12.19թ. 4. «Կոտայք Շին» ՍՊԸ 22.02-20.12.19թ. 5. «ԳՈ-ԿԱՌ» ՍՊԸ 24.07-01.11.19թ. 6.«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ 12.09-11.11.19թ. 7. «Արևիվի» ՍՊԸ 05.09-04.11.19թ.</p>	<p>1. հանձնարարականները ժամանակին և պատշաճ չկատարելու պատճառով</p> <p>6. լրացուցիչ՝ նոր մայթի կառուցման աշխատանքներ Հր.Քոչարի փողոցի Վ.Փափազյան -Ն,Զարյան փողոցների միջև ընկած հատվածում</p> <p>7. լրացուցիչ՝ բազալտե եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ Նորք-Մարաշ վարչական շրջանի</p>

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

					Արմենակյան փողոցում
6	Կամրջային կառուցվածքների սպասարկում և շահագործում	Կշահագործվեն և սպասարկման ծառայություններ կմատուցվեն մայրաքաղաքի 37 կամուրջների, կամրջային կառուցվածքների, ուղեանցների, վերգետնյա անցումների և էստակադաների համար:	1. ԵՔ-ՀԲՄԾՁԲ-19/2 Ծառայություններն ավարտվել են, շահագործման և պահպանման ծառայություններ են մատուցվել 40 օբյեկտներում:	1. «Կամուրջշին» ՓԲԸ 06.03-25.12.19	
7	Շենքերի ճակատային մասերի և վթարային շքապատշգամբների նորոգում	2019թ. ծրագրերով ըստ անհրաժեշտության կլինի իրականացնել մոտ 60 շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգման և քարերի մաքրման աշխատանքներ, ինչպես նաև կվերանորոգվեն շուրջ 150 վթարային շքապատշգամբներ:	1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/59 1.1 ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/71 2. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/126 3. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/12 Կատարվել են թվով 5 շենքերի՝ Արշակունյաց 16, 16ա Արշակունյաց 26, Բագրատունյաց 34, Բագրատունյաց 37 և Բագրատունյաց հ.47 ճակատային պատերի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Կատարվել են նաև Բագրատունյաց հ. 47 շենքի ճակատի սվաղի վերանորոգման աշխատանքները: 3.Էրեբունի և Կենտրոն վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման աշխատանքներն ավարտվել են: Էրեբունի վարչական շրջանում վերանորոգվել են 21 հատ պատշգամբներ, Կենտրոն վարչական շրջանում՝ 8 հատ:	1.«Ագարակ» ԲԲԸ 26.07-29.09.19թ 2. «Գրինսան» ՍՊԸ 18.10-11.11.19 3. «ԱՐԱՄԱՆ ՍԹՈՈՒՆ ՍԹԱՅԼ» ՍՊԸ 01.03-10.06.19թ.	Ավարտվել են մնացած 7 վարչական շրջանների պատշգամբների նորոգման նախագծային աշխատանքները:
8	Հանգստի գոտիների	2019թ. ծրագրում ընգրկելու համար	1.ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/42 2.ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/5	«Մավշին» ՍՊԸ 24.05-30.08.19թ.	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	վերակառուցում և բարեկարգում	առաջարկվել է քննարկել առկա նախագծերով օբյեկտներ, մասնավորապես Օղակաձև այգու 1-6 հատվածների վերակառուցման և բարեկարգման աշխատանքները:	Օղակաձև զբոսայգու 3-րդ հատվածի բարեկարգման և Մարգարյան փողոցի զբոսայգու ջրավազանի վերանորոգման աշխատանքներն ավարտվել են:	«Արեհովշին» ՍՊԸ 06.09-29.11.19թ	
9	Մանկապարտեզների վերանորոգում	2019թ. ծրագրով վերանորոգման աշխատանքներ են նախատեսվում Երևանի ենթակայության շուրջ 30 մանկապարտեզներում:	ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/148 Կատարվել են Նոր Նորքի հ.119 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներ: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/143 Երևանի մանկապարտեզների հակահրդեհային համակարգերի տեղադրման աշխատանքներ: Տեղադրվել են թվով 94 մանկապարտեզներում:	«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ 28.10.-25.12.19 թ 2. «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ 29.10.-25.12.19 թ	
10	Պոլիկլինիկաների վերանորոգում	2019թ. նախատեսվում է կատարել վերանորոգման աշխատանքներ 5 պոլիկլինիկաներում՝ «Նոր Արեշ պոլիկլինիկա» ՓԲԸ, «Կարմիր Բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ, «Նոր Արաբկիր պոլիկլինիկա» ԱԿ ՓԲԸ, «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ:	1. ԵՔ- ԲՄԱՇՁԲ-19/9-1 «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ 2. ԵՔ- ԲՄԱՇՁԲ-19/9-1 «Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ 3. ԵՔ- ԲՄԱՇՁԲ-19/9-2 «Նոր Արաբկիր» ԱԿ ՓԲԸ 4. ԵՔ- ԲՄԱՇՁԲ-19/9-3 «Նոր Արեշ պոլիկլինիկա» 5. ԵՔ- ԲՄԱՇՁԲ-19/9-3 «Կարմիր Բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ 6. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/22 «Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ պոլիկլինիկաների տանիքների վերանորոգման աշխատանքներն ավարտվել են: 7. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/157 Հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել «Շտապօգնություն» ՓԲԸ-ի հ.5 ենթակայանի շենքում:	1.«Էլդոգար» ՍՊԸ 22.02-30.08.19թ. 2.«Էլդոգար» ՍՊԸ 22.02-30.08.19թ. 3.«Արալպլաստ» ՍՊԸ 22.02-30.08.19թ. 4.«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ 22.02-29.09.19թ. 5.«ԱՐՏՇԻՆ 1» ՍՊԸ 22.02-30.08.19թ. 6. «Գրանտշին» ՍՊԸ 29.04-28.06.19թ. 7. «Էլդոգար» ՍՊԸ 08.11-25.12.19թ.	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

11	Ջրային կառույցների վերանորոգում, վերազինում, պահպանում և շահագործում	Ջրային կառույցների վերականգնման ծրագիրը կրում է շարունակական բնույթ: 2019թ. շարունակվելու են մայրաքաղաքի 36 ջրային կառույցների վերանորոգման, վերազինման, պահպանման և շահագործման աշխատանքները: Նախատեսվում է նաև համայնք-մասնավոր հատված շարունակական համագործակցության միջոցով իրականացնել բարեկարգման կարիք ունեցող շատրվանների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ:	1. ԵՔ-ՀԲՄԾՁԲ-19/1 Կատարվել են մայրաքաղաքի 37 ջրային կառույցների ընթացիկ նորոգման, շահագործման և պահպանման ծառայությունները:	1.«Ջրային կառույցների» ՓԲԸ 27.02-25.12.19թ.	
12	Հուշարձանների լվացում, պատվանդանների վերանորոգում և տարածքների բարեկարգում	Երևանի քաղաքապետարանի տարեկան ծրագրերի շրջանակներում պարբերաբար կատարվում են հուշարձանների	1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/10 Կատարվել են Օղակաձև զբոսայգու 3-րդ հատվածում Հ.Այվազովսկու արձանի պատվանդանի վերանորոգման աշխատանքները:	1. «Եղիսաբեթ Ալվազյան» ԱԶ 01.03-30.10.19թ.	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		լվացման, պատվանդանների վերանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքներ:			
13	Երևանի քաղաքային աղբավայրի տարածքի բարեկարգման աշխատանքներ		ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/4 աշխատանքներն ավարտվել են	«Բիդեք» ՍՊԸ 02.09.-11.12.19թ.	
14	«Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքում մեքենաների փակ կայանատեղի (անգարի) և լվացման կետի կառուցում		ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/2 Աշխատանքներն ավարտվել են	«Արարատշին» ՍՊԸ 08.07-05.10.19թ	
15	«Հանրապետության հրապարակ» մետրոյի կայարանի վերգետնյա հատվածի քարե շինության վերանորոգում		նախագծային փաստաթղթերը առկա են		Գնման հայտ չի ներկայացվել
16	Երևան քաղաքի մանկական խաղահրապարակներում ռետինե հատակների տեղադրում		ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/62 աշխատանքներն ավարտվել են, ռետինե հատակներ են տեղադրվել թվով 25 բակերում	«ԱԲԱԿ» ՍՊԸ 17.07-01.10.19թ.	
17	Մալաթիա-		ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/83 Աշխատանքներն ավարտվել են	«Շինվերելակ» ՍՊԸ	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	Սեբաստիայի հրշեջ-փրկարարական ջոկատի հ.4 շենքի նորոգում			30.07.-20.09.19թ	
18	Երևանի ՋԷԿ-ի հարևանությ. գտնվող հողամասի վրա թափառող կենդանիների վնասազերծման կենտրոնի կառուցում		ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-19/4 Աշխատանքներն ավարտվել են	«Բիդեք» ՍՊԸ 02.09.-11.12.19թ.	
19	Ոռոգման ցանցերի կառուցում		ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-1 2.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-2 3.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/71-3 Կատարվել են ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքներ. Նուբարաշենի 11-րդ փող. Նանսենի փողոցում, Գ.Նժդեհի փողոցում	1. «Օրինոն 7» ՍՊԸ 31.07.-04.09.19թ. 2. «Մ-Գրուպ Էներգոսերվիս» ՍՊԸ, 25.07-24.08.19թ. 3. «Բիդեք» ՍՊԸ, 22.07- 09.09.19թ.-29.09.19թ	
20	Կոյուղագծերի կառուցում		ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/149 Դավիթ Բեկի փողոցի հարակից նորաստեղծ թաղամասի կոյուղագծի կառուցման աշխատանքներ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/128 , Բուզանդի 1/3 մասնաշենքի կոյուղագծի վերատեղադրում	«ՄԼԼ Ինդասթրիալ» ՍՊԸ 07.11-25.12.19թ. «Ունիվերսալ» ՍՊԸ 04.11-25.12.19թ.	

Առևտուր և սպասարկում					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում	Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով նախատեսվում է առաջարկությունների ձևավորում և ներկայացում:	Առևտրի և սպասարկումների ոլորտում օրենսդրական կարգավորումներ կատարելու նպատակով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության կողմից մշակվել է թվով 7 նորմատիվ-իրավական ակտ, ինչպես նաև «Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը /հեռավորությանը/ ներկայացվող պահանջները սահմանելու մասին» և «Երևան համայնքի վարչական տարածքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լուծված կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծերը:	Առևտրի և սպասարկումների վարչություն հունվար-դեկտեմբեր	
2	Առևտրի ոլորտում համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում	Նախատեսվում է ոլորտում օրենքով տրված լիազորություններ շրջանակներում իրականացնել համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում:	Առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվել է համակարգված և արդյունավետ հսկողություն , ինչի արդյունքում հայտնաբերվել է իրավախախտման 2059 դեպք, որից ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 113-րդ հոդվածով` 5, 152-րդ հոդվածով` 2, 156-րդ հոդվածով` 4, 158-րդ հոդվածով` 135, 162-րդ հոդվածով` 1019, 169.16-րդ հոդվածով` 894: Շարունակվել է հսկողությունը ժամը 24.00-ից հետո աշխատող օբյեկտների գործունեության նկատմամբ` ապահովելով գիշերային ժամերին բնակիչների հանգիստը: 2019 թվականի ընթացքում բազմաբնակարան շենքերի առաջին և նկուղային հարկերում գործող հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների գործունեության վերաբերյալ բնակիչներից ստացված հաղորդումների հիման վրա չեն տրամադրվել համապատասխան թույլտվություններ:	Առևտրի և սպասարկումների վարչություն, վարչական շրջաններ հունվար-դեկտեմբեր	
3	Բացօթյա առևտրի	Նախատեսվում է բացօթյա առևտրի	2019 թվականի ընթացքում բացօթյա ապօրինի առևտուրն արգելելու ուղղությամբ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում	Առևտրի և սպասարկումների	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	նկատմամբ հսկողության իրականացում	նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում:	կազմակերպվել են շրջայցեր: Արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համատեղ միջոցառումներ են կազմակերպվել նաև վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի և ՀՀ ոստիկանության աշխատակիցների հետ: Բացօթյա ապօրինի առևտուր իրականացնելու դեպքերով կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 1250 արձանագրություն:	վարչություն, վարչական շրջաններ հունվար-դեկտեմբեր	
4	Գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	Մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու , արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու բնակչությանը թարմ ու որակյալ մթերքով ապահովելու նպատակով կշարունակվի վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպման գործընթացը:	Երևանի քաղաքապետարանը ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու բնակչությանը թարմ ու որակյալ մթերքով ապահովելու նպատակով Արաբկիր վարչական շրջանի Կասյան փողոցում շաբաթ և կիրակի օրերին կազմակերպել է գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառ:	Առևտրի և սպասարկումների վարչություն, Արաբկիր վարչական շրջան 2-4-րդ եռամսյակներ	
5	Ոլորտի	Նախատեսվում է	Երևան քաղում շրջիկ և շրջածախ առևտուրը կանոնակարգելու,	Առևտրի և	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	զարգացման ծրագրի մշակում	առևտրի և սպասարկման օբյեկտների ճտեղաբաշխման և ոլորտի զարգացման ծրագրի մշակում:	առևտրի և սպասարկման տվյալ ոլորտի զարգացումը ապահովելու նպատակով մշակվել և շրջանառության մեջ են դրվել շրջիկ և շրջածախ առևտուրը կանոնակարգելու վերաբերյալ մի շարք օրենքների նախագծեր, որոնք ՀՀ ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել են:	սպասարկումների վարչություն	
6	Գյուղմթերքի շուկայի ստեղծում՝ մասնավոր ներդրումների ներգրավմամբ	Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով նախատեսվում է դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական և փաթեթի մշակում և կառուցում:	Երևան համայնքի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 26-ին կառուցապատող Արման Թումասյանին տրվել է Հ. Քաջագունու փողոցի թիվ 3/4 հասցեում գյուղատնտեսական արտադրանքի փոքրածավալ շուկա կառուցելու թիվ 01/18-Թ-1981-1188 շինարարության թույլտվությունը:	Առևտրի և սպասարկումների վարչություն 4-րդ եռամսյակ	
7	Առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն	Կիրականացվի Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ	2019 թվականի ընթացքում Երևան քաղաքի վարչական շրջաններում տեղական տուրքերի գանձումները ստուգելու նպատակով 25000 օբյեկտներում իրականացվել է հսկողություն, ինչի արդյունքում առևտրի և սպասարկումների ոլորտում տեղական տուրքերի հավաքագրումը 2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմել 1.492.051.400 ՀՀ դրամ, որը նախորդ տարվա հավաքագրված գումարի համեմատ ավել է 370.682.900 դրամով կամ 33%-ով: Առանց թույլտվության գործունեություն իրականացնելու դեպքերով կազմվել է 894 արձանագրություն:	Առևտրի և սպասարկումների վարչություն հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություններին, տեղական տուրքերի մուտքերի</p>			
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		նկատմամբ անհրաժեշտ հսկողություն և Երևանի բյուջեի համապատասխան մուտքերի ապահովում:			
8	Ժամկետանց ապրանքների բացահայտում և կանխարգելում	Նախատեսվում է առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացում:	Առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ իրականացվել են հսկողություններ, ինչի արդյունքում պիտանիության ժամկետն անցած ապրանքներ իրացնելու դեպքերով կազմվել է 85 արձանագրություն:	Առևտրի և սպասարկումների վարչություն, վարչական շրջաններ հունվար-դեկտեմբեր	
9	Ստորգետնյա անցումներում առևտրի վերահսկողություն	Նախատեսվում է ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում:	Պարբերաբար շրջայցեր են կազմակերպվել Երևան քաղաքում գտնվող ստորգետնյա անցումներ, արգելվել է բացօթյա ապօրինի առևտուրը, ինչպես նաև ապահովվել է տեղական տուրքերի գանձումը: 2019 թվականի ընթացքում իրականացվել է ստորգետնյա անցումներում առկա տարածքները զբաղեցրած իրավաբանական ու ֆիզիկական անձանց հաշվառում:	Առևտրի և սպասարկումների վարչություն, հունվար-դեկտեմբեր	
10	Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում	Հետիոտնի երթուղիի խոչընդոտը բացառելու	Հանրային սննդի ժամանկավոր-սեզոնային ծառայություն իրականացնելու համար կնքվել է թվով 265 պայմանագիր՝ նախորդ տարվա 202-ի փոխարեն, գանձելով 53.932.260 դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 13.328.696 դրամով կամ 32.8%-ով:	Առևտրի և սպասարկումների վարչություն, 1-ին, 2-րդ, 3-րդ	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		նպատակով նախատեսվում է աշխատանքներ իրականացնել բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգման ուղղությամբ		Էռամսյակներ	
11	Առևտրի կանոնակարգման աշխատանքների կատարում՝ ապամոնտաժումների և արդիականացման ուղղությամբ	Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով կշարունակվեն միջոցներ ձեռնարկել չգոչծող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիք տեք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժման ու արդիականացման ուղղությամբ: Առաջնահերթությու ն կտրվի կանաչ տարածքներում և մայթերի վրա տեղադրված	2019 թվականի ընթացքում վարչության նախաձեռնությամբ ապամոնտաժվել են Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում՝ մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում առանց իրավահաստատող փաստաթղթերի առկայության տեղադրված 36 տաղավարներ ու կրպակներ:	Առևտրի և սպասարկումների վարչություն, հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		կրպակների ապամոնտաժմանը:			
12	Շինանյութերի վաճառքի կետերի վերահսկողություն	Հետևողական աշխատանքներ կիրականացվեն սեփականաշնորհ ված տարածքներում շինանյութերի վաճառքի կետերի պարտադիր պարսպապատման ու սահմանազատման ապահովման, սանիտարական կանոնների պահպանման ու շրջակա միջավայրի ազտոտման բացառման ուղղությամբ:	Հսկողություն է իրականացվել բոլոր վարչական շրջաններում գործող շինանյութերի վաճառքի կետերի պարտադիր պարսպապատման ու սահմանազատման ապահովման, սանիտարական կանոնների պահպանման և շրջակա միջավայրի աղտոտման բացառման ուղղությամբ:	Առևտրի և սպասարկումների վարչություն, հունվար-դեկտեմբեր	

Կոմունալ տնտեսություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնանորոգում	Նախատեսվում է հիմնանորոգել բազմաբնակարան շենքերի շուրջ 700 շքամուտք:	Փաստացի վերանորոգվել է 1015 մուտք:	Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն, համատիրություններ	
2	Բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում	Կիրականացվի բազմաբնակարան բնակելի շենքերի շուրջ 60000քմ հարթ և 30000քմ թեք տանիքների վերանորոգում:	Փաստացի վերանորոգվել է 57594քմ հարթ տանիք և 46787քմ թեք տանիք:	Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն, համատիրություններ	
3	Բազմաբնակարան շենքի կառավարման նոր մոդելի ներդրում	Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործումից հետո նախատեսվում է ներդնել բազմաբնակարան շենքի կառավարման նոր մոդել, որը կապահովի գործառույթների	Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից մշակվում է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:		

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		հստակեցում, պատասխանատվության սահմանում և բնակչությանը հաշվետու լինելու մեխանիզմներ:			
4	Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում	Նախատեսվում է Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամի և ՀՀ Երևան համայնքի միջև 2014թ. փետրվարի 20-ին և դեկտեմբերի 22-ին կնքված փոխըմբռնման հուշագրերի շրջանակներում բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում:			Երևան քաղաքի 2019թ. բյուջեով գումար նախատեսված չէ
5	Աղբահանության ոլորտի աշխատանքների կատարելագործում	Վերանայել Երևանի փողոցների մաքրման,	Երևան քաղաքի ավագանու 23 ապրիլի 2019թ. N 90-Ա որոշմամբ ստեղծվել է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ:		

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	մ	աղբահանության և ձնամաքման աշխատանքների կազմակերպման գործընթացը: Նախատեսվում է մայրաքաղաքում լիարժեք և արդյունավետ լուծում տալ աղբահանության, սանիտարական մաքրման և ձնամաքման ոլորտի հիմնախնդիրներին և ապահովել եվրոպական չափանիշներին համապատասխան որակյալ ծառայություններ:			
6	Ներգրավել նոր և/կամ երկրորդ օպերատոր:	Բաց և թափանցիկ մրցույթի միջոցով ներգրավել նոր և/կամ երկրորդ օպերատոր:	2019 թվականին երկրորդ օպերատորի ներգրավման անհրաժեշտություն չի եղել: Փոխարենը ստեղծվել է «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ:		
7	Թափոնների կառավարման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգի ստեղծում	Աշխատանքներ կիրականացվեն ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, Եվրոպական միության և Եվրոպական	Ընթացքում է մրցույթային գործընթացը: Մրցույթային գործընթացը նախատեսվում է, որ կավարտվի մինչև 2020թ-ի հունվար ամիսը: 2020թ-ի հունվար-փետրվար ամիսներին նախատեսվում է ստորագրել շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր: Պայմանագրի իրականացման ժամկետն է 2 տարի:	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրի իրականացման գրասենյակի» (ԵԿՆ ՄԻԳ)	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>ներդրումային բանկի միջև ստորագրած կոշտ կենցաղային թափոնների ոլորտում համագործակցելու պատրաստակամության մասին փոխընկերման հուշագրով նախատեսված ծրագրի իրագործման ուղղությամբ, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել թափոնների կառավարման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգ, ինչպես նաև կառուցել նոր սանիտարական աղբավայր գործող աղբավայրի հարևանությամբ:</p>			
8	Չնախատեսված վայրերում աղբի տեղադրման դեպքերը բացառելու	Կշարունակվեն ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ միջոցները չնախատեսված	Ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ չնախատեսված վայրերում աղբ տեղադրելու դեպքերը բացառելու ուղղությամբ:		

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	ուղղությամբ միջոցների ձեռնարկում	վայրերում աղբ տեղադրելու դեպքերը բացառելու ուղղությամբ:			
9	Անվավոր կոնտեյներների համար հարթակների կառուցում	Նախատեսվում է վերջնականապես լուծել անվավոր կոնտեյներների հարթակների կառուցման խնդիրը:	Հարթակների կառուցումը հետաձգվել է		
10	Բազմաբնակարան շենքերի աղբամուղերի արդիականացում	Նախաձեռնել բազմաբնակարան շենքերի աղբամուղերի արդիականացման կամ դրանց փակման գործընթաց՝ ելնելով սանիտարահիգիենիկ, առողջապահական նկատառումներից:	Բազմաբնակարան շենքի աղբամուղը հանդիսանում է շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն, որի փակման համար անհրաժեշտ է սեփականատերերի որոշում: Փակվել է թվով 124 աղբամուղ:		
11	Արտաքին լուսավորության ցանցի շահագործում, պահպանում և նորոգում	Նախատեսվում է իրականացնել արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման, ընթացիկ	2019թ-ին Երևանի քաղաքապետարանի և Երբաղլույս ՓԲԸ ֆինանսական միջոցների հաշվին իրականացվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքներ, որոնց շնորհիվ արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 2019թ-ի տարեվերջին կազմել է 1678.34կմ:	Երբաղլույս ՓԲԸ	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>նորոգման աշխատանքներ: Նորոգման աշխատանքների իրականացման շնորհիվ կվերականգնվի ևս 30 կմ ցանց և 2019թ. տարեվերջին Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի երկարությունը կկազմի 1673կմ:</p>			
12	<p>Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացում</p>	<p>Նախատեսվում է Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացում: Մասնավորապես՝ Քաղաքային կանաչ լուսավորության ծրագրի շրջանակներում խնայված միջոցների հաշվին առկա լուսատուների ԼԵԴ</p>	<p>Քաղաքային կանաչ լուսավորության ծրագրի շրջանակներում 2019թ-ին արդիականացվել է Կիևյան կամուրջի, Շիրակի փողոցի, Առնո Բաբաջանյան փողոցի, Լենինգրադյան փողոցի Կիևյան կամուրջից Մոնթե Մելքոնյան հատվածի և Դավիթաշենի կամուրջի արտաքին լուսավորության ցանցը, մասնավորապես գործող ԺԿՈւ լուսատուները փոխարինվել են ավելի արդիական ԼԵԴ լուսատուներով: Երբաղույս ՓԲԸ-ն սեփական միջոցների հաշվին իրականացրել է Մատենադարանի և հարակից տարածքի, Կենտրոն վարչական շրջանի մի քանի բակերի, Մաշտոցի պողոտայի և Գ. Լուսավորիչ փողոցի հատման մասի ստորգետնյա հետիոտն անցումի, ինչպես նաև մի քանի կամարանցումների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները, մասնավորապես գործող ԺԿՈւ լուսատուները և մետալիալոգեն լուսարձակները փոխարինվել են ավելի արդիական ԼԵԴ լուսատուներով: Մաշտոցի պողոտայիում՝ Արամի փողոցից Բուզանդ հատվածի 4 դեկորատիվ, Պուշկինյան ոճի լուսատուների թվով 28 սնդիկային լամպերը փոխարինվել են ԼԵԴ լամպերով:</p>		

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		լուսատուներով փոխարինում:			
13	Երևան քաղաքի թվով 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացում	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի հետ կնքված վարկային պայմանագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի թվով 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացում: Պայմանագրով նախատեսվում է՝ •վերակառուցել վերը նշված փողոցների հենասյուները՝ հաշվի առնելով լուսադիոդային լուսատուների տեխնիկական տվյալները, •փոխարինել 4400 հատ նատրիումական լուսատուները 2200 հատ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի հետ կնքված վարկային պայմանագրի շրջանակներում, <<Երևանի քաղաքային լուսավորության>> ծրագրի շրջանակներում 2019թ-ի հունվարի 11-ին Երբաղլույս ՓԲԸ-ի և Ֆիննական Քոնսորթիում Օնիեն Օյ, Էնսթո Օյ, Էվերլայթ Էլեքթրոնիկս Քո. ՍՊԸ-ի (ենթակապալառուներ ԱյԷՖ ենթակառուցվածքների նախագծում, Այ/Էս ԱյԷՖ լայթինգ ՍՊԸ, Իքոնեքս-Քոմ, Տրանսնախագիծ ՓԲԸ, Քարամյանշին ՍՊԸ) միջև կնքվել է Երևան քաղաքի 28 փողոցների լուսադիոդային (LED) լուսավորության համակարգի մատակարարման և տեղադրման աշխատանքների կատարման պայմանագիր: Պայմանագրի շրջանակներում 2019թ-ի ընթացքում աշխատանքներ չեն իրականացվել:	Կապալառու Քոնսորթիում Օնիեն Օյ, Էնսթո Օյ, Էվերլայթ Էլեքթրոնիկս Քո. ՍՊԸ	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>Ժամանակակից, որակյալ լուսադիոդային լուսատուներով, իրականացնել գոյություն ունեցող մալուխային ցանցի անցկացումը ստորգետնյա խրամուղիներում:</p>			
14	<p>Արտաքին լուսավորության սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում</p>	<p>Շահագործման աշխատանքների կազմակերպման ներկայիս եղանակից անցնել շուրջօրյա շահագործման՝ ավելացնելով սպասարկող անձնակազմի թիվը, կազմավորել հերթափոխներ, որոնք շուրջօրյա կիրականացնեն մայրաքաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործումը և պահպանումը: Նախատեսվում է սպասարկման համար ձեռք բերել 4 հատ նոր</p>			<p>2019թ-ի բյուջեով, նշված ծրագիրն իրականացնելու համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել, ուտի այն չի իրականացվել:</p>

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		տեխնիկա (ավտովերնակ, ավտոլաբորատորիա), գոյություն ունեցող հնացած տեխնիկան փոխարինելու, ինչպես նաև շուրջօրյա աշխատանքներ կատարելու համար:			
15	«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի իրականացում	«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի շրջանակում նախատեսվում է 45 բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքերի վերելակների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների լուսավորության համար անհրաժեշտ	«ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի իրագործման շրջանակում ավարտվել են առաջին փուլի թվով 50 շենքի արևային վահանակների տեղադրման և լուսավորության անցկացման նախագծման աշխատանքները: Ավարտվել է նաև շենքերի մուտքերի, արտաքին լուսավորության լուսատուների, և սոցիալապես խոցելի ընտանիքների համար նախատեսված լուսատուների գնման մրցույթը: Ընդհանուր առմամբ գնվել է 9 տեսակի 4150 լուսատու: Հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն շենքի սեփականատերերի առնվազն 2/3-ի համաձայնությամբ, այժմ բնակիչների հետ աշխատանքներ են տարվում՝ քաղաքապետարանին համապատասխան թույլտվության տրամադրման ուղղությամբ: Ծրագրի 2-րդ փուլի վերաբերյալ, շուրջ 50 համատիրությունից ստացվել է ավելի քան 180 շենքի հայտ: Բոլոր շենքերում կիրականացվեն մասնագիտական ուսումնասիրություններից (տանիքների համապատասխանության, սեյսմիկ հետազոտություններ և այլն):	Աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչություն	

		<p>Էլեկտրաէներգիայի արտադրությունը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է վերոնշյալ շենքերի շքամուտքերում (առաջինից մինչև վերջին հարկ) և բակային տարածքներում տեղադրել ժամանակակից էներգախնայող LED լուսատուներ: Կներդրվի նաև տվյալների առցանց հավաքագրման և վերլուծության մոնիթորինգային համակարգ: Ծրագրի նպատակն է՝ խթանել «կանաչ տնտեսական աճ»-ը, էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցով կրճատել բնակիչների էներգետիկ</p>			
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>ծախսերը, նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները և բարձրացնել հարմարավետության մակարդակը արդյունքում նպաստելով բնակիչների կյանքի որակի բարելավմանը:</p>			
--	--	---	--	--	--

Տրանսպորտ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	
1	2	3	4	5	6
1	Տրանսպորտային ցանցի արդիականացման գործընթացի իրականացում	Նախատեսվում է մեկնարկել տրանսպորտային ցանցի արդիականացման գործընթացը՝ ներդրումների ներգրավմամբ, ամբողջությամբ փոխել շարժակազմը, ինչպես նաև	Խորհրդատվական ընկերության կողմից ներկայացված՝ Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի վերջնական տարբերակի նախագծի ամբողջական փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ քննարկման համար:	«Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ լիմիթիդ» խորհրդատվական ընկերություն Տրանսպորտի վարչություն	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>վերանայել երթուղիներն ու կանգառները, ապահովել քաղաքային տրանսպորտի հասանելիությունը առնվազն մինչև 23:00:</p> <p>Նախատեսվում է ներդնել էլեկտրոնային և միասնական տոմսային նորագույն համակարգ՝ սոցիալական խմբերի համար հստակ գեղջային համակարգի կիրառմամբ:</p> <p>Նախատեսվում է մշակել և կիրառել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի նոր և արդյունավետ երթուղային ցանց, ապահովել հասարակական տրանսպորտի՝ միջազգային չափանիշներով սպասարկման ծառայությունների</p>			
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		մատուցում՝ կազմավորելով նոր օպերատոր:			
2	Սպասարկման ժամանակակից պահանջները բավարարող մեծ և միջին տեղատարողության նոր ավտոբուսների ձեռք բերում	Միկրոավտոբուսների հնարավորինս բացառման գերակա սկզբունքով նախատեսվում է ձեռք բերել նոր երթուղային ցանցին համապատասխան՝ սպասարկման ժամանակակից պահանջները բավարարող մեծ և միջին տեղատարողության նոր ավտոբուսներ:	Նոր երթուղային ցանցի ներդրման համար անհրաժեշտ ավտոբուսների չափորոշիչների հաստատումից հետո 2020թ. կմեկնարկի ավտոբուսների ձեռք բերման գործընթացը, որը կկազմակերպվի մրցութային կարգով:		«Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ լիմիթիդ» խորհրդատվական ընկերություն Տրանսպորտի վարչություն
3	Հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտի մատչելիության և տարածական կողմնորոշման հնարավորության ապահովում	Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել տրանսպորտի մատչելիություն և տարածական կողմնորոշման հնարավորություն, տեղաշարժի հարմարավետություն,	Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել ավտոբուսներ, որոնք հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար		Տրանսպորտի վարչություն

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>հասարակական տրանսպորտում շարունակել կանգառների ձայնային ազդարարման համակարգերի, ինչպես նաև տեղաշարժը դյուրինացնող համապատասխան սարքավորումների տեղադրման գործընթացը, խաչմերուկներում կահավորել ձայնազդանշանային լուսացույցներ:</p>			
4	<p>Մետրոյի առնվազն մեկ նոր կայարանի կառուցման մեկնարկ: Մետրոպոլիտենի գործունեության արդյունավետությանն ուղղված աշխատանքների իրականացում</p>	<p>Տրանսպորտային ցանցի ընդլայնման նպատակով նախատեսվում է մեկնարկել մետրոյի առնվազն մեկ նոր կայարանի կառուցման աշխատանքները: Կիրականացվի Երևանում մետրոպոլիտենի աշխատանքի որակի, հուսալիության և անխափան</p>	<p>Մետրոպոլիտենի նոր կայարանների կառուցման նպատակով Աջափնյակ վարչական շրջանի (առաջին փուլով առանձնացվող՝ Հալաբյան-Աբեյյան խաչմերուկի հատվածում առաջին կայարանի) շինարարության իրականացման համար նախագծային առաջարկների քննարկում ոլորտի մասնագետների ու պատասխանատուների («Արթուն» ԲԲԸ, «Երևաննախագիծ», «Հիդրոտրանս» կազմակերպություններ) մասնակցությամբ:</p> <p>Իրականացվել են աշխատանքներ՝</p> <ul style="list-style-type: none"> -Գծի վերին շինության վերաբեռնավորում և փտած փայտակոճերի փոխարինում նորերով. -81-717 տիպի վագոնների թվով 16 անվասայլակների և դրանց պնևմատիկ սարքավորումների նորոգում և ստուգում ուլտրաձայնային արատանշող սարքավորումներով. -Զորավար Անդրանիկ կայարանի հակահրդեհային և ջրամատակարարման խողովակաշարի վերանորոգում և 	<p>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ</p> <p>հունվար-դեկտեմբեր</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>աշխատանքի ապահովում, էներգահամակարգի հուսալիության, ազդանշանային համակարգի, շարժասանդուղքների աշխատանքի հուսալիության բարձրացում, ուղևորների անվտանգության ապահովում, կայարանների և համալիրների վերանորոգում և պատշաճ տեսքի ապահովում, հարմարավետության և սպասարկման որակի բարձրացում: Կնախաձեռնվի մետրոպոլիտենի 12` 8 գլխամասային և 4 միջանկյալ վագոնների արդիականացման աշխատանքներ: Նոր երթուղային ցանցի ներդրման համատեքստում կապահովվի</p>	<p>արդիականացում: -Մետրոպոլիտենի I և II գծերով ռելսերի գլխիկների հարթեցման աշխատանքների իրականացում (ընդհանուր առմամբ` 1760գ.մ.). - I և II գծերով փայտակոճերի փոխարինու-մով գծի վերաբեռնավորում` ընդհանուր առմամբ 804.3գ.մ. -Ջրատար վաքի մաքրման աշխատանքների իրականացում (ընդհանուր առմամբ` 100մ) -I և II լուսավորության և փոքր մեխանիզացիայի արկղերի մոնտաժման աշխատանքների իրականացում (ընդհանուր առմամբ` 900 մետր) -Կամրջային կռունկի նորոգման աշխատանքների իրականացում</p>		
--	--	---	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		մետրոպոլիտենի շահագործման արդյունավետության բարձրացումը:				
5	Հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխում և ավտոկայանատեղերի կանոնակարգում	Նախատեսվում է իրականացնել հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխում և կահավորում, ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով: Կիրականացվի ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ:	<p>-Երևանի քաղաքապետի 08.02.2019թ. հ.265-Ա որոշմամբ հասարակական տրանսպորտի կանգառ է սահմանվել Պ.Սևակի փողոցում՝ հ.8/2 հասցեի դիմաց (շարժման՝ դեպի Կ.Ուլնեցու փողոց ուղղությամբ):</p> <p>-Երևանի քաղաքապետի 10.05.2019թ. հ.1557-Ա որոշմամբ հասարակական տրանսպորտի կանգառներ է սահմանվել Նոր Խարբերդի Կենտրոնական փողոցում՝ 16-րդ, 20-րդ, 24-րդ փողոցների հետ հատման մոտեցումներում:</p> <p>-Երևանի քաղաքապետի 10.05.2019թ. հ.1558-Ա որոշմամբ հասարակական տրանսպորտի կանգառներ է սահմանվել Պ.Սևակի փողոցում՝ հ.8/2 հասցեի դիմաց և Դավթաշենի 3-րդ փողոցում՝ հ.31 տան հարող հատվածում ու 3-րդ-5-րդ փողոցների խաչմերուկում:</p> <p>-Երևանի քաղաքապետի 29.05.2019թ. հ.1779-Ա որոշմամբ հասարակական տրանսպորտի կանգառներ է սահմանվել Գյուրջյան փողոցում՝ Գյուրջյան-Լյուքսեմբուրգի փողոցների խաչմերուկից անց և «Պանդոկ» օբյեկտի դիմաց:</p> <p>-Երևանի քաղաքապետի 13.06.2019թ. հ.1966-Ա որոշմամբ հասարակական տրանսպորտի կանգառներ է սահմանվել Աբովյան փողոցում՝ հ.33 շենքի մոտ՝ հ.27 շենքին կից գործող կանգառի տեղափոխմամբ:</p> <p>-Երևանի քաղաքապետի 13.06.2019թ. հ.1965-Ա որոշմամբ հասարակական տրանսպորտի կանգառներ է սահմանվել Ա.Միկոյան փողոցի հ.2/1 հասցեի դիմաց:</p>	Տրանսպորտի վարչություն	ՀՀ Ճանապարհային ոստիկանություն	հունվար-հունիս
6	Վերգետնյա էլեկտրատրանսպորտի սպասարկման որակի բարելավում	Նախատեսվում է նաև վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և	<p>-Մեքաստիայի, Բագրատունյաց, Հր.Քոչարի, Գյուլբենկյան և Էրեբունու փողոցներում նորոգվել է 15263 մետր ընդհանուր երկարությամբ հպակային ցանց՝ նոր պղնձալարերով.</p> <p>-Տարբեր փողոցներում նորոգվել է 5000 մետր ընդհանուր երկարությամբ հպակային ցանց՝ նախկինում օգտագործված պղնձալարերով.</p>	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ	հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:</p>	<ul style="list-style-type: none"> -Տարբեր փողոցներում նորով է փոխարինվել 129 մետր երկարությամբ ստորգետնյա մալուխագիծ. - Տեղադրվել է 193 հատ մալուխի կցորդիչ. -Թվով 5 տրոլեյբուսի թափք մասնակի նորոգվել է. -Վերանորոգվել է տրոլեյբուսի թվով 22 քարշի շարժիչ. -Մեքենայական բաժնում մոնտաժվել է տրոլեյբուսների լվացման նոր կայան: -Վերանորոգվել է 3 հատ էլեկտրական ամբարձիչ. -Մասնակիորեն վերանորոգվել է մեքենայական բաժնի թվով 2 հորային ամբարձիչ. -Նորով է փոխարինվել հպակային ցանցի թվով 3 սնման արկղ: -Չարենցի փողոցում ներկվել է 13 հատ հենասյուն. -Բաբաջանյան փողոցում 13 հատ վթարային հենասյուն փոխարինվել են նախկինում օգտագործված հենասյուներով. -Վերանորոգվել է տրոլեյբուսի թվով 7 օժանդակ շարժիչներ. -Արտաշիսյան և Մեբաստիայի փողոցում նորոգվել է վթարային վիճակում գտնվող թվով 26 հենասյուն. -Սկսվել և շարունակվում է մեկ հատ տրոլեյբուսի տրոլեյբուսի հիմնանորոգման աշխատանքները. -Վերանորոգվել է 2 հատ ուժային տրանսֆորմատոր. 		
7	<p>Ավտոկայանատեղերի կազմակերպման աշխատանքների կատարում</p>	<p>Գիրականացվեն ծառայողական, թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլների ավտոկայանատեղերի կազմակերպման աշխատանքներ:</p>	<ul style="list-style-type: none"> -Երևան քաղաքի ավագանու 29.01.2019թ. հ.55-Ա որոշմամբ թվով 40 իրավաբանական և ֆիզիկական անձանց թույլատրվել է 2019թ. շարունակել ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը: - Երևան քաղաքի ավագանու 29.01.2019թ. հ.56-Ա որոշմամբ թույլատրվել է քաղաքացի Լևոն Բարդակջյանին կազմակերպելու ծառայողական ավտոկայանատեղ Վ.Վաղարշյան փողոցի 12/9 և 12/5 հասցեներին հարակից ճանապարհահատվածում: - Երևան քաղաքի ավագանու 19.03.2019թ. հ.74-Ա որոշմամբ թույլատրվել է «Ս.Ա.Մ. Հոթել» ՍՊԸ-ին կազմակերպելու ծառայողական ավտոկայանատեղ Սարյան փողոցի հ.9 շենքին հարակից ճանապարհահատվածում: - Երևան քաղաքի ավագանու 23.04.2019թ. հ.88-Ա որոշմամբ թույլատրվել է «Նորիկ-70» ՍՊԸ-ին կազմակերպելու ծառայողական ավտոկայանատեղ Բաշինջաղյան փողոցի 172/3 և 172/8 հասցեներին հարակից ճանապարհահատվածում: 	<p>Տրանսպորտի վարչություն</p> <p>«Փարկինգ Սիթի Մերվիս» և «Լոկատոր» ՓԲԸ-ներ</p> <p>հունվար-դեկտեմբեր</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>- Երևան քաղաքի ավագանու 23.04.2019թ. հ.89-Ա որոշմամբ թույլատրվել է «ՈՄԿԵ-ԱԳԱ» ՍՊԸ-ին կազմակերպելու ծառայողական ավտոկայանատեղ Հանրապետության փողոցի հ.61 շենքին հարակից ճանապարհահատվածում:</p> <p>- Երևան քաղաքի ավագանու 22.05.2019թ. հ.103-Ա որոշմամբ թույլատրվել է քաղաքացի Հասմիկ Մարգարյանին կազմակերպելու ծառայողական ավտոկայանատեղ Սախարովի հրապարակում՝ Նալբանդյան փողոցի հ.48/1 հասցեին հարակից ճանապարհահատվածում:</p> <p>- Երևանի ավագանու 25.12.2019թ. հ.187-Ա որոշմամբ թույլատրվել է թվով 16 իրավաբանական և ֆիզիկական անձանց 2020 թվականի ընթացքում շարունակելու նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:</p> <p>- Երևանի քաղաքապետի 28.02.2019թ. հ.522-Ա որոշմամբ սահմանվել է թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլների կայանատեղ՝ Խոբենացու փողոցի հ.հ.25/4 և 25/5 կառույցների դիմաց, դեպի Շահումյան հրապարակ տանող ճանապարհահատվածում:</p> <p>- Երևանի քաղաքապետի 15.03.2019թ. հ.711-Ա որոշմամբ սահմանվել է թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլների կայանատեղեր՝ Մաշտոցի պողոտա՝ «Երևան Սիթի» սուպերմարկետի դիմաց, տեղային լայնացմամբ ճանապարհահատվածում (շարժման դեպի Հաղթանակ կամուրջ ուղղությամբ):</p> <p>Մաշտոցի պողոտա՝ հ.5 հասցեի դիմաց, տեղային լայնացմամբ ճանապարհահատվածում (շարժման դեպի Հաղթանակ կամուրջ ուղղությամբ):</p> <p>Մաշտոցի պողոտա՝ մզկիթի մոտ, հասարակական տրանսպորտի կանգառից հետո՝ մինչև վճարովի կայանատեղ ճանապարհահատվածում (շարժման դեպի Ֆրանսիայի հրապարակ ուղղությամբ):</p> <p>Մաշտոցի պողոտա՝ հ.42 հասցեի դիմաց, չհասած հասարակական տրանսպորտի կանգառ ճանապարհահատվածում (շարժման դեպի Ֆրանսիայի հրապարակ ուղղությամբ):</p> <p>Աբովյան փողոց՝ երիտասարդական հիմնադրամի շենքի դիմաց, հասարակական տրանսպորտի կանգառից հետո</p>		
--	--	---	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>ճանապարհահատվածում (շարժման դեպի Աբովյան պուրակ ուղղությամբ): Ազատության պողոտա՝ հ.12 հասցեի «Հրաշք» խանութի դիմաց ճանապարհահատվածում (շարժման դեպի Լամբադա կամուրջ ուղղությամբ):</p> <p>-Երևանի քաղաքապետի 29.05.2019թ. հ.1780-Ա որոշմամբ սահմանվել է թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլների կայանատեղ Կորյունի փողոցում՝ ԵՊԲՀ-ին հարակից հատվածում. - Երևանի քաղաքապետի 29.05.2019թ. հ.1781-Ա որոշմամբ սահմանվել է թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլների կայանատեղ Տ.Պետրոսյան փողոցում՝ հ.10Ա շենքի հարևանությամբ գտնվող հասարակական տրանսպորտի կանգառից անց. -Երևանի քաղաքապետի 13.06.2019թ. հ.1964-Ա որոշմամբ սահմանվել է թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլների կայանատեղ Կիևյան փողոցում՝ հ.19Ա հասցեի դիմացի ճանապարհահատվածում: -Երևանի քաղաքապետի 07.08.2019թ. հ.2810-Ա որոշմամբ սահմանվել է թեթև մարդատար տաքսի ավտոմոբիլների կայանատեղ Վարդանանց փողոցում՝ հ.11 հասցեի դիմաց, դեպի Սախարովի հրապարակ տանող ճանապարհահատվածում:</p>		
8	Այլընտրանքային տրանսպորտային միջոցների խթանում	Նախատեսվում է այլընտրանքային, բնապահպանական և տեսանկյունից անվտանգ տրանսպորտային միջոցների (էլեկտրամոբիլներ, էլեկտրաավտոբուսներ) կիրառում, էլեկտրատրանսպորտի խթանում:	Որպես էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոց Երևան քաղաքում էլեկտրամոբիլների տարածմանը խթանելու նպատակով Երևանի ավագանու 25.12.2019թ. հ.182-Ն որոշմամբ, որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար սահմանվել է տեղական վճարի դրույքաչափերի նկատմամբ արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:	Տրանսպորտի վարչություն հոկտեմբեր-դեկտեմբեր	
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ աշխատանքների կազմակերպում	Վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին մեթոդական աջակցության տրամադրման, ոլորտի օրենսդրական բարեփոխումների քննարկման նպատակով օրենսդրական բարեփոխումների քննարկման նպատակով նախատեսվում է իրականացնել 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների /ԽՀՀ/ համար սեմինար և	<p>Ընտանիքում բռնության կանխարգելման և խնամատարության կարգի վերաբերյալ իրականացվել է սեմինար՝ Երևան քաղաքի 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և սոցիալական աջակցության տարածքային բաժինների աշխատակիցների մասնակցությամբ:</p> <p>Բաժինը մասնակցել է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին առնչվող խնդիրների քննարկման նպատակով վարչական շրջանների ԽՀՀ-ների կողմից կազմակերպված շուրջ 37 նիստերին:</p>	Տարվա ընթացքում	

		<p>վերապատրաստում: Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովման, նմանիրավիճակներո ւմ նրանց հայտնվելու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման համատեքստում պարբերաբար իրականացվել և իրականացվելու են վարչական շրջաններում հրատապ դեպքերի առնչությամբ հանդիպում- քննարկումներ, կազմակերպվում են ԽՀՀ նիստեր՝ բաժնի պարտադիր մասնակցությամբ: Ելնելով դեպքի առանձնահատկությ ունից և երեխայի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնվելու</p>			
--	--	---	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>պատճառներից՝ պարտադիր քննության է առնվում երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման առաջնայնությունը, որից հետո միայն դիտարկվում է երեխայի այլընտրանքային խնամքի տարբերակները՝ նախապատվություն տալով խնամակալությանը, խնամատարությանը և որդեգրությանը: Դրանց անհնարինության դեպքում դիտարկվում է երեխայի մանկական խնամակալական հաստատությունում (մանկատուն, շուրջօրյա ժամանակավոր խնամքի հաստատություն) հայտնվելը:</p>			
2	Երեխային հետագա	Պարբերաբար իրականացվում է	Բաժնի կողմից իրականացվել են այցելություններ «Երևանի Մանկան տուն» և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-	Տարվա ընթացքում	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	<p>որդեգրման կամ խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելուն ուղղված աշխատանքների իրականացում</p>	<p>հաստատությունում գտնվող երեխաների անձնական տվյալների, տեղավորման հիմքերի ուսումնասիրություն՝ երեխային հետագա որդեգրման կամ խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծման նպատակով:</p>	<p>ներ, այնտեղ խնամվող երեխաների փաստաթղթերի ուսումնասիրության և հետագայում որդեգրման կամ խնամատար ընտանիքում տեղավորելու նպատակով:</p>		
3	<p>Մուրացիկության և թափառաշրջիկության երևույթների կանխարգելում</p>	<p>Երեխաների շրջանում մուրացիկության և թափառաշրջիկության երևույթների կանխարգելման նպատակով բաժինը մասնակցում է մուրացիկ, թափառաշրջիկ երեխաների, նրանց հետ կապված խնդիրների լուծման, միասնական աշխատանքների կազմակերպման նպատակով ՀՀ ոստիկանության</p>	<p>ՀՀ ոստիկանության կողմից ստացված տեղեկատվության համաձայն անչափահաս և առևտրով զբաղվող, մուրացիկ և թափառաշրջիկ 35 երեխաների տվյալները փոխանցվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին՝ ընտանիքներին հնարավորինս աջակցելու և հետագայում մուրացիկության դեպքերը կանխարգելելու համար: ՀՀ ոստիկանությունից ստացված փաստաթղթերի և ծնողի դիմումի հիման վրա 1 երեխայի տրվել է «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու մասին տեղեկանք, որի հիման վրա վերջինս տեղավորվել է Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիր:</p>	<p>Տարվա ընթացքում</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		պետի 07.11.2013թ. հ. 3837-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստերին, ներկայացնում առաջարկություններ , նախաձեռնում հատուկ դեպքերի քննարկումներ:			
4	Երեխաների կրթական համակարգում ընդգրկում, կրթության շարունակականության ապահովում, անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերում	Կրթությունից չարամտորեն խուսափող, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորած երեխաների վերաբերյալ շահագրգիռ կազմակերպություններից և անձանցից ստացված տեղեկատվության հիման վրա աջակցում է երեխաների կրթական համակարգում ընդգրկման, կրթության շարունակականության ապահովման, անհրաժեշտ փաստաթղթերի	Տարբեր գերատեսչություններից ստացված գրությունների և ահազանգերի հիման վրա կատարվել է կրթությունից չարամտորեն խուսափող շուրջ 33 երեխաների և նրանց ընտանիքների ուսումնասիրություն՝ երեխաների կրթության շարունակականությունն ապահովելու նպատակով , ընտանիքներին տրամադրվել է իրավակաբանական և սոցիալական աջակցություն, նշված ընտանիքները գտնվում են բաժնի մշտական վերահսկողության ներքո:	Տարվա ընթացքում	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		ձեռքբերման գործընթացներին: Այս նպատակով համագործակցում է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության, ՀՀ ոստիկանության, Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի հետ:			
5	Խնամակալական ընտանիքների համար սեմինարի կազմակերպում	Ծնողավարման հմտությունների սեմինար պարապմունքներ 12 վարչական շրջանների խնամակալական ընտանիքների համար:	ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-1 Կազմակերպվել է սեմինար խնամակալական ընտանիքների համար՝ ծնողավարման հմտություններ թեմայով: Միջոցառմանը մասնակցում էին Երևան քաղաքի 12 վարչական շրջաններից խնամակալներ, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամներ:	«Մաստեր Սթայլ» ՍՊԸ 29.03.2019թ.	
6	Խնամատար ընտանիքների խրախուսման միջոցառման կազմակերպում	«Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված խնամատար ընտանիքների խրախուսման միջոցառում:	ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-2 Իրականացվել է միջոցառում «Ընտանիքի միջազգային օրվա» կապակցությամբ՝ Երևանի խնամատար ընտանիքների մասնակցությամբ, որի ավարտին երեխաներին տրամադրվել է նվերներ, ծնողներին՝ ծաղկեփնջեր:	«Լոռե Հոլդինգ» ՍՊԸ 17.05.2019թ.	
7	Երեխաներին այցելություն թանգարաններ, թատրոններ	Այցելություն թանգարաններ, թատրոններ՝ հատուկ կարիքներով	ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-4 Հատուկ կարիքներով երեխաների մասնակցությամբ կազմակերպվել է այցելություններ թանգարաններ, թատրոններ, ազգային պատկերասրահ:	Արարատ Ղուկասյան Ա/Ձ 18.04.2019թ. 19.04.2019թ.	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		Երեխաների մանակցությամբ:			
8	Այցելություն Երևանի ծննդատներ, մանկատներ, խնամքի հաստատություններ	Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված այցելություն Երևանի ծննդատներ, մանկատներ, խնամքի հաստատություններ:	1.ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-4 2.ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-3 Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ իրականացվել է՝ -այցելություններ Երևանի ծննդատներ /նվերների, ծաղկեփնջերի տրամադրում/, -այցելություններ «Երևանի մանկան տուն» և «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» հեքիաթի հերոսների մասնակցությամբ /նվերների տրամադրում/, -կազմակերպվել է հատուկ կարիքներով երեխաների մասնակցությամբ միջոցառում /նվերների տրամադրում/:	1.Մրարատ Ղուկասյան Ա/Ձ, 01.06.2019թ. 2.Մարինե Կույումջյան Ա/Ձ 01.06.2019թ.	
9	Սոցիալական քարոզչության իրականացում	Սոցիալական քարոզչության հոլովակների պատրաստում և տարածում	ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-5 Միջոցառումը չի իրականացվել:		Լուծվել է պայմանագիրը, քանի որ կազմակերպության ներկայացրած նյութերը և ժամկետները չեն համապատասխանել ներկայացված պահանջներին:
10	Սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում	12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների	ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-1 Ընտանիքում բռնության կանխարգելման և խնամատարության կարգի վերաբերյալ իրականացվել է սեմինար՝ Երևան քաղաքի 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և սոցիալական աջակցության տարածքային	«Մաստեր Սթայլ» ՄՊԸ 26.09.2019թ.	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		համար սեմինար և վերապատրաստում:	բաժինների աշխատակիցների մասնակցությամբ:		
11	Լուսանկարչական մրցույթի կազմակերպում	«Էրեբունի-Երևան» տունին ընդառաջ լուսանկարչական մրցույթ՝ հատուկ կարիքներով շնորհալի երեխաների մասնակցությամբ:	ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-4 «Էրեբունի-Երևան» տունին ընդառաջ կազմակերպվել է լուսանկարչական մրցույթ՝ հատուկ կարիքներով շնորհալի երեխաների մասնակցությամբ, որի ընթացքում հաղթողներին և բոլոր մասնակիցներին տրամադրվել են նվերներ	Արարատ Դուկասյան Ա/Ձ 14.10.2019թ.	
12	Ամանորյա միջոցառումների և մասնակցություն	Ամանորին ընդառաջ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում՝ հատուկ կարիքներով երեխաների տիկնիկային թատրոն այցելության և ամանորյա միջոցառումներին մասնակցության կազմակերպում, նվերների տրամադրում	ԵՔ-ԳՀԾՁԲ-19/46-3 Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում՝ հատուկ կարիքներով շուրջ 150 երեխաների մասնակցությամբ կազմակերպվել է ամանորյա միջոցառում: Միջոցառման ընթացքում երեխաներին տրամադրվել են նվերներ, քաղցրավենիք և ամանորյա ներկայացման տոմսեր:	1.Մարինե Կույումջյան Ա/Ձ 12.12.2019թ., 13.12.2019թ., 16.12.2019թ.	
13	Այլ ծրագրեր	1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերում, հաշվառում, կարիքների գնահատում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված	1.Հայտնաբերվել և հաշվառման են վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 83 և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 11 երեխա, իրականացվել է կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան կառույցներ՝ մասնագիտական աջակցություն ստանալու նպատակով: 2.Երեխաների տվյալների շտեմարանում մուտքագրվել և փոփոխություններ է արվել կյանքի դժվարին իրավիճակներում	Տարվա ընթացքում	

		<p>արտոնությունների տրամադրման ապահովում:</p> <p>2. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների մուտքագրում բազայում:</p> <p>3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրում:</p> <p>4. Մանկատների բեռնաթափման նպատակով խնամատարության ինստիտուտի կայացմանն աջակցություն:</p> <p>5. Մանկատների բեռնաթափման, երեխայի</p>	<p>գտնվող 226 երեխայի տվյալների վերաբերյալ:</p> <p>3. Հինք ընդունելով ծնողի դիմումը և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի եզրակացությունը՝ վկայագրվել է 1512 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:</p> <p>4. Խնամատարության կարգի համաձայն տրվել է 9 եզրակացություն. կնքվել է 13 պայմանագիր Երևանի քաղաքապետի և խնամատար ծնողի միջև, կազմվել է 13 համաձայնագիր:</p> <p>5. Հինք ընդունելով քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը և կենսապայմանների ուսումնասիրության ակտերը՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին տրամադրվել է 48 դրական, 1 բացասական եզրակացություն: 22 օտարերկրյա քաղաքացու տրվել է խորհրդատվություն՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին եզրակացություն ստանալու վերաբերյալ և ուղղորդվել ՀՀ արդարադատության նախարարություն: Հաշվառման է վերցվել երեխա որդեգրել ցանկացող 68 անձ:</p> <p>Որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառման վերցված 57 անձանց տրվել է «Մանուկ» տեղեկատվական շտեմարանում առկա որդեգրման ենթակա երեխաների տվյալներ: Կազմվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ուղարկվել թվով 30 գրություն և հարցում՝ երեխային տեսակցելու և որդեգրման հնարավորությունը պարզելու համար:</p> <p>Տրամադրվել է որդեգրել ցանկացող անձի և որդեգրման ենթակա երեխայի շփումների վերաբերյալ 8 եզրակացություններ:</p> <p>Իրականացվել է վերահսկողություն Երևան քաղաքում որդեգրողների և խնամատար ընտանիքներում դաստիարակության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ</p>		
--	--	---	---	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>ընտանիքում ապրելու իրավունքի իրացման նպատակով որդեգրման հնարավորության մասին եզրակացության տրամադրման գործընթացի իրականացում:</p> <p>6.Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տեղավորում խնամքի և պաշտպանության հաստատություններում և այդ հաստատություններից դուրսգրում:</p> <p>7.Միջազգային և տեղական հասարակական կառուցների և կազմակերպությունների հետ համատեղ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, համատեղ միջոցառումների</p>	<p>6.Վարչական շրջաններից ստացված գրությունների, ծնողների դիմումների, ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև կենսապայմանների ուսումնասիրման արդյունքների հիման վրա 63 երեխա տեղավորվել է մանկատուն, տրվել է մանկատնից դուրսգրման մասին 13 եզրակացություն:</p> <p>7.Բաժինը համագործակցել է Հետաքննող լրագրողներ ՀԿ-ի, Եվրոպական միության և Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան-ի, Վորդ Վիժն Հայաստան-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի», Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, «Յունիսեֆ»-ի, ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի, ՍՕՍ Մանկական Գյուղեր հայկական բարեգործական հիմնադրամի «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի, «Բարի մամա» ՀԿ-ի, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի, Երևանի մանկատների, երեխաների խնամքի և պաշտպանության այլ հաստատությունների, ՀՀ ոստիկանության ԱԳ բաժինների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և արդարադատության նախարարությունների համապատասխան բաժինների հետ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների խնդիրների ուսումնասիրման և հետագա խնդիրների կանխարգելման նպատակով:</p> <p>8.ՀՀ կառավարության 18.03.2010թ. հ. 269-Ն որոշմամբ հաստատված որդեգրման կարգի համաձայն, հաշվառվել է որդեգրման ենթակա 50 երեխա:</p>		
--	--	---	---	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>իրականացում, սեմինարներին մասնակցություն:</p> <p>8.Որդեգրման ենթակա երեխաների հաշվառում՝ անձնակ ան քարտի լրացում, անձնական գործի կազմում և կենտրոնացված հաշվառման ներկայացում</p>			
--	--	--	--	--	--

Մշակույթ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիրը	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Պետական և ազգային տոների նվիրված միջոցառումների կազմակերպում	Նախատեսվում է իրականացնել միջոցառումների շարք՝ նվիրված պետական և ազգային տոներին, այդ թվում՝ Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Թանգարանների միջազգային օրվան, «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողներ ի ամենամյա	<p>1.ԵՔ-ՄԱԾՁԲ-18/123 Ամանորյա միջոցառումների ծրագրով 2018 թվականի վերջին օրը մայրաքաղաքի Հանրապետության հրապարակում մեկնարկել է համերգային ծրագիր: Ուղիղ կեսգիշերին ավանդական շքեղ հրավառությունը լուսավորել է Երևանի երկինքը:</p> <p>2.ԵՔ-ՄԱԾՁԲ-18/123 Հանրապետության հրապարակում կայացել է «Սուրբ ծննդյան» տոնին նվիրված համերգային ծրագիր:</p> <p>3.Բուն Բարեկենդանի տոնի առթիվ Երևանի քաղաքապետարանը և Արարատյան Հայրապետական թեմը կազմակերպել են տոնական միջոցառում: Միջոցառումն անցկացվել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում:</p> <p>4.Թատրոնի համաշխարհային օրվա կապակցությամբ Դվին մյուզիք հոլում կազմակերպվել է համերգային ծրագիր, Երևանի քաղաքապետի ընդունելություն և պարզևատրման արարողություն:</p>	<p>1. «ՖակտորիՓրոդաքշն» ՍՊԸ 01.01.2019</p> <p>2.«ՖակտորիՓրոդաքշն» ՍՊԸ 06.01.2019</p> <p>3. 21.02.2019</p> <p>4. «Թի Էն Սաունդ» ՍՊԸ 28.03.2019 «Մյուզիք հոլ» ՍՊԸ 28.03.2019 «Դասական երաժշտության աջակցության» ՀԿ 28.03.2019 «Բլիզարդ» ՍՊԸ 28.03.2019 «Զավեն Մեծ-Գևորգյան»</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>մրցույթ-փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնին, Ջազի միջազգային օրվան, «Երևանյան ամառ 2019» եռամսյա ծրագրին, «Էրեբունի-Երևան» տոնակատարության նը, «Գրադարանավարի օրվան» և հայականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին:</p>	<p>5. ԵՔ-ՀՄԱԾՁԲ-19/1-2 Երևան քաղաքի Սիրահարների այգում կազմակերպվել է տոնական միջոցառում՝ նվիրված «Մայրության և գեղեցկության տոնին»:</p> <p>6. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/51 Իրականացվել է Հայոց ցեղասպանության 104-րդ տարելիցին նվիրված միջոցառում Ծիծեռնակաբերդում՝ Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի մասնակցությամբ:</p> <p>7. Ջազի միջազգային օրվան նվիրված Կասկադ համալիրի հարակից տարածքում կազմակերպվել է համերգային ծրագիր՝ արտերկրից հրավիրվել են հայտնի ջազ երգիչներ և կատարողներ:</p> <p>8. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/93 Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ Երևանի Ազատության հրապարակում իրականացվել է թեմատիկ մշակութային միջոցառում, որի շրջանակում կայացել է «Մերի Փոփինսը Երևանում» երաժշտական ներկայացման առաջնախաղը:</p> <p>9. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/150 Երևանի հիմնադրման 2801 ամյակին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնակատարության բրենդավորման աշխատանքներ</p>	<p>Ա.Ձ 28.03.2019</p> <p>5. «Տեխնո Սիթի» ՍՊԸ 29.03.2019</p> <p>6. «Թի Էն Սաունդ» ՍՊԸ 03.04.2019</p> <p>7. «Ջազի հայկական ասոցիացիա» ՀԿ 29.03.2019</p> <p>8. «Աութսոբս» ՍՊԸ 29.05.2019</p> <p>9. «Փարլիսիս հեպտա» ՍՊԸ 19.10.2019</p>	
--	--	---	---	---	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p><u>10. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/182-3</u> <u>11. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/182-1</u> <u>12. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/182-2</u> <u>13. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/183-1</u> <u>14. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/183-2</u></p> <p>Երևանի հիմնադրման 2801 ամյակին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնակատարությունը իրականացվեց Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում՝ հանրապետության լավագույն երգիչ-երգչուհիների, կոլեկտիվների մասնակցությամբ, ըստ ժանրային առանձնահատկության /ջազ, ռետրո, ռոք, ազգագրական, ժողովրդական, դասական և այլն/:</p> <p>Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացավ ամփոփիչ պաշտոնական միջոցառումն ու համերգային ծրագիրը: Միջոցառումն ավարտվեց համաժամանակյա տոնական հրավառությամբ:</p> <p><u>15.ԵՔ-ՄԱԾՁԲ-19/122</u> <u>16.ԵՔ-ՄԱԱՇԲ-19/1</u> <u>17.ԵՔ-ՄԱԾՁԲ-19/121</u> <u>18.ԵՔ-ՄԱԱՊՁԲ-19/13</u> <u>19.ԵՔ-ՄԱԱԾՁԲ-19/2</u></p> <p>Ամանորին և Սուրբ Ծննդյան տոնակատարություններին նվիրված՝ ՀՀ կառավարության աջակցությամբ, իրականացվել է Գլխավոր տոնաձառի լույսերի հանդիսավոր վառմանարարողության և տարեմուտի համերգային ծրագրերը՝ Գարիկ-Սոնա բենդի, հանրահռչակ երաժիշտ Գորան Բրեզովիչի մասնակցությամբ մասնակցությամբ:</p> <p>Հյուսիսային պողոտայում կազմակերպվել է բրենդային տոնաձառների ցուցադրություն, Երևանի հիմնադրման 2750-</p>	<p>10. «Էլիտա ԷՄՎԵ» 17.10.2019 11. «Կոնցեպտ իվենթս» ՍՊԸ 16.10.2019 12. «Մալետտա» ՍՊԸ 17.10.2019 13. «Աութոբու» ՍՊԸ 18.10.2019 14. «Մեցցո փրոդաքշն» ՍՊԸ 18.10.2019</p> <p>15.«Լայթ դիզայն» ՍՊԸ 13.12.2019 16. «Սթեյջ սթայլ» ՍՊԸ 17.12.2019 17. «ՖակտորիՓրոդաքշն» ՍՊԸ 29.11.2019 18. «Սթեյջ սթայլ» ՍՊԸ 28.11.2019 19.«ՀԱԷԿ-ի շինարարություն» ՓԲԸ 20.12.2019</p>	
--	--	---	---	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			ամյակի շատրվանների պուրակում կազմակերպվել է Ամանորյա տոնավաճառ, Հանրապետության հրապարակում կազմակերպվել է հեքիաթային-կոնցեպտի գործունեությունը, դեպի գլխավոր տոնաձառ տեղադրվել է ժամանակավոր վերգետնյա անցում:		
2	Միջազգային միջոցառումների և մշակութային ծրագրերի ու նախագծերի իրականացում	Մայրաքաղաքում տարվա կտրվածքով նախատեսվում է անցկացնել աջակիցը լինել նաև միջազգային միջոցառումների շարքի և մշակութային ծրագրերի ու նախագծերի՝ «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոն, «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոն:	<p>1. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/91 Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի երաժշտական նկարված ստիդիոյոցների 12-րդ մրցույթ-փառատոնի լսումների փուլը 10 անվանակարգերով, որին մասնակցել են Երևանի քաղաքապետարանի 10 արվեստի և 15 երաժշտական դպրոցների սաները: Անցկացվել է նաև մրցույթ-փառատոնի եզրափակիչ Գալա համերգ, որի ժամանակ խրախուսվել են առաջին լավագույն տասնյակ զբաղեցրած դպրոցների տնօրենները:</p> <p>2. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/51 Պատանի ստեղծագործողների մրցույթ-փառատոն նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 116-ամյակին: Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում կազմակերպվել է համերգային ծրագիր: Հաղթող ճանաչված պատանի ստեղծագործող սաները խրախուսվել են մրցանակներով:</p> <p>3. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/146-3 4. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/146-2 5. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/146-1</p> <p>Իրականացվել է «Երևանյան ամառ» երաժշտական համերգաշարը՝ յուրաքանչյուր շաբաթ-կիրակի մայրաքաղաքի տարբեր հարթակներում բացօթյա համերգային ծրագրերով հանդես են եկել ճանաչված երգիչ-երգչուհիներն ու համույթները:</p> <p>6. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/119 Իրականացվել է «Երևան» պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի անդրանիկ բացօթյա ելույթը՝ ՀՀ Ազգային ժողովի հարակից այգում՝ ՀՀ վարչապետի, Երևանի քաղաքապետի, պետական և հոգևոր այրերի մասնակցությամբ:</p>	<p>1. «Լոռե Հոլդինգ» ՍՊԸ 29.05.2019</p> <p>2. «Թի Էն Սաունդ» ՍՊԸ 03.04.2019</p> <p>3. «Փարլիսիս հեպտա» ՍՊԸ 06.08.2019</p> <p>4. «Արմեն Գևորգյան» ԱԶ 06.08.2019</p> <p>5. «Ֆակտորի Փրոդյաքշն» ՍՊԸ 02.08.2019</p> <p>6. «Լայթ լայֆ» ՍՊԸ 12.07.2019</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>յամբ: Ծրագրում առաջին անգամ հնչեց Մանսուրյանի «Երևան» ստեղծագործությունը:</p> <p>7. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/106 Իրականացվել է ընդունելություն «Ոսկե ծիրան» Երևանի կինոյի ամենամյա փառատոնի մասնակիցների և պատվավոր հյուրերի համար:</p> <p>Ցուցաբերվել է աջակցություն «Ոսկե ծիրան» Երևանի կինոյի ամենամյա փառատոնին և «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնին:</p>	<p>7. «ԻԷՍԱՅՄԻ» ՍՊԸ 21.06.2019</p>	
3	<p>Համատեղ մշակութային տարաբնույթ ծրագրերի և միջոցառումների իրականացում</p>	<p>Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ 2019 թվականին կիրականացվեն մշակութային տարաբնույթ ծրագրեր և միջոցառումներ, որոնք, տարածելով և հանրահռչակելով հայկական մշակույթը, կստեղծեն և կամրապնդեն համագործակցության նոր շրջանակներ:</p>	<p>1. «Երևանի օրերը Մանկու Պետերբուրգում» ծրագրով Երևանի քաղաքապետարանի պատվիրակության պաշտոնական այցի շրջանակում ապահովվել է մշակութային ծրագրի պատշաճ իրականացումը: Պետերբուրգյան պետական կապելլայի համերգասրահում ելույթ է ունեցել «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի «ԹմբաԹա» երիտասարդական ժողովրդական ռոք խումբը, իսկ Բոյանցնի անվան պատանի հանդիսատեսի թատրոնի բեմում ներկայացվել է Նարինե Գրիգորյանի «Ընտանիքս իմ ճամպուկում է» մոնտերկայացումը:</p> <p>2. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/158 «Երևանի օրերը Արցախում» ծրագրի շրջանակում ազգագրական համայններն ու անհատ կատարողները ելույթ ունեցան ԱՀ ՊԲ N գորամասում և Ստեփանակերտում: Համերգները նվիրված էին կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի և սպարապետ Վազգեն Սարգսյանի հորեյաններին:</p> <p>3. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/185 «Երևանի օրերը Վանաձորում» ծրագրի շրջանակում Վանաձորի գեղագիտության ազգային կենտրոնում կայացավ Երևանի արվեստի դպրոցների սաների «Լոռին իմ սրտում» խորագիրը կրող ցուցահանդեսը, «Ժամանակակից գրադարանը» սեմինար-</p>	<p>1. 20.06.2019-22.06.2019</p> <p>2. «Պեցցո» ՍՊԸ 23.08.2019</p> <p>3. «Աութսոբս» ՍՊԸ 17.10.2019</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>խորհրդակցությունը Ավ. Իսահակյանի անվան գրադարանի մասնակցությամբ՝ Լոռու մարզային գրադարանում, Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի ջազ բենդը ելույթ ունեցավ Վանաձորի Է. Կարթմյանի անվան երաժշտական դպրոցում, նույն դպրոցում ելույթ ունեցավ Հայաստանի պետական կամերային նվագախումբը, Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում ելույթ ունեցավ Երևանի կամերային պետական թատրոնը, իսկ ծրագիրն ամփոփվեց Վանաձորի «Հայք» հրապարակում՝ Արամ ՄՊՅ-ի և «Գաթաբենդ» համույթի մասնակցությամբ գալա-համերգով:</p> <p>4. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/184 Կայացել է «Թումանյանական օրերը Թբիլիսիում» մշակութային ծրագիրը՝ Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված: Թբիլիսիում գտնվող հայկական մշակույթի տանը կազմակերպվել է միջոցառում հայ և վրացի մտավորականների մասնակցությամբ</p> <p>5. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/198 «Երևանի օրերը Գյումրիում» ծրագրի շրջանակում Գյումրու Ա. Բրուտյանի անվան երաժշտական դպրոցում կայացավ Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի ջազ բենդի ելույթը, «Ժամանակակից գրադարանը» սեմինար-խորհրդակցությունը Ավ. Իսահակյանի անվան գրադարանի մասնակցությամբ՝ Շիրակի մարզային գրադարանում, Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում կայացավ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի ելույթը, նույն դահլիճում Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը ներկայացրեց «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը:</p>	<p>4. «Բաղդասարյանս դիզայն ստուդիո» ՍՊԸ 23.10.2019</p> <p>5. Տեխնո Սիթի» ՍՊԸ 06.11.2019</p>	
4	Թանգարաններ				
4.1	Թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրությ	Նախատեսվում է իրականացնել ժամանակակից և միջին սերնդի	Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարաններում շարունակում է իրականացվել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանումը, կազմակերպվել են բազմաբովանդակ միջոցառումներ, ցուցահանդեսներ, հանդիպում-	Տարվա ընթացքում Աշխատակազմի մշակույթի վարչություն	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

<p>ունենք, որոնց արդյունքում կկազմակերպվեն նոր ցուցադրություններ</p>	<p>արվեստի գործերի ցուցադրություն, գիտական, կրթական գործունեություն, կենցաղն ու մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրություն, թանգարանային ֆոնդի համալրում, ինչպես նաև թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կկազմակերպվեն նոր ցուցադրություններ: Թանգարաններում կկազմակերպվեն պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված միջոցառումներ և ցուցադրություններ:</p>	<p>քննարկումներ: Մասնավորապես, Երևան քաղաքի պատմության թանգարանի մշտական ցուցադրության Հնագույն և միջնադարյան պատմության բաժինը համալրվել է 4 կուռք-արձաններով: Պեղավայրերին վերաբերող քարտեզը, պեղավայրի մակետը և պաստառները տեղադրվել են սրահում՝ որպես լրացնող-դիդակտիկ նյութ: Հնագույն և միջնադարյան պատմության բաժինը համալրվել է բրոնզի դարաշրջանի կարաս և կաթսա առարկաներով, Շենգավիթ հուշարձանի ցուցափեղկը՝ քրեղանով: Դրամների ցուցափեղկում պիտակները նորացվել և թարգմանվել են ռուսերեն: Մշտական ցուցադրության Նորագույն պատմության գիտական ցուցադրության համապատասխան ենթաբաժնում ավելացվել է Կենտրոնական բանկից նվեր ստացված «Երևան 2800» 2 հուշադրամ և 500 և 100.000 անվանական թղթադրամներ: Լրացվել են մի շարք ցուցանմուշների պիտակներ: Համալրվել է Նորագույն պատմության ժամանակաշրջանի «Երևանը երեք հանրապետությունների մայրաքաղաք» սրահի ցուցադրությունը, մասնավորապես՝ Երևանի պատվավոր քաղաքացիների, Երկրորդ աշխարհամարտի և դրամների բաժինները: Տարվա ընթացքում թանգարանի մշտական ցուցադրությունը համալրվել է 34 ցուցանմուշով: Գրվել են համապատասխան եռալեզու պիտակներ: Կազմվել են եռալեզու բացատրագրեր Երևանի արտաքին կապերի վերաբերյալ: «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում կազմակերպվել է «Էրեբունու գանձերը» խորագրով ցուցադրությունը: Բացվելով եվրոպական ժառանգության օրերի շրջանակներում՝ ցուցադրությունը տևել է սեպտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 28-ը: Այս ցուցադրությունը նվիրված էր հայ ականավոր արվեստաբան, հողարվեստի հիմնադիրներից Մարկոս Գրիգորյանի հիշատակին: Այս ցուցադրությունը ժամանակակից արվեստն ու հնագիտությունը ներդաշնակելու յուրօրինակ փորձ էր: Այստեղ ներկայացված էին «Էրեբունի» ՊՀԱԹ-ի պահոցներում պահվող բացառիկ իրեր (նորաստորական և ուրարտական սեպագիր արձանագրություններ, ուրարտական որմնանկարների բացառաիկ հատվածներ, խեցեղենի տարատեսակ նմուշներ և այլն): Բացի այդ, միաժամանակ ցուցադրվեցին Էրեբունի ամրոցի</p>	
--	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>պեղումներից մաղված ոչ պիտանի հողից և նույն ամրոցում աճող խոտերից հողարվեստի ստեղծագործություններ՝ կերտված հայտնի նկարիչներ Նարեկ Ավետիսյանի, Արթուր Օշականցու և Կարեն Քյուլիեյանի կողմից:</p>		
4.2	<p>Թանգարանների միջազգային օրվան և Եվրոպական ժառանգության օրվան նվիրված միջոցառումներ</p>	<p>Կանցկացվեն միջոցառումներ՝ նվիրված Թանգարանների միջազգային օրվան, Եվրոպական ժառանգության օրվան:</p>	<p>Թանգարանների միջազգային օրվան «Թանգարանների գիշեր» ծրագրով մայիսի 18-ին Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարաններում իրականացվել են հետևյալ միջոցառումները.</p> <p>Երևանքաղաքի պատմության թանգարանում իրականացվել է Մինասի «Ամառը Ջաջուռում» և նա 12 հայտնի գեղանկարիչների գործերի ցուցահանդես: Կազմակերպվել է նաև կանադահայրուսանկարչուհի Մարինա Անախաթունյանի «Երկու քաղաք. վերաիմաստավորում» խորագրով ցուցահանդեսը: «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում անցկացվել է ցուցահանդես՝ «Գյուղական լանդշաֆտի ժառանգությունը հայկական մշակույթի համատեքստում», «Կավագործության ավանդույթները».</p> <p>վարպետացրաս Նետաձգության ավանդույթների ցուցադրական ելույթներ Էրեբունի մ իջնաբերդի շուրջ:</p> <p>«Արի՛ պեղենք մի սահին» պեղումներ՝ «Պատանի հնագետ» դպրոցի սաների և այլ դպրոցահասակ երեխաների մասնակցությամբ: Հնագիտական ժառանգության վերաբերյալ ֆիլմերի ցուցադրություն «Էրեբունու տրամանկարները».</p> <p>գորգագործության և կարպետագործության ցուցադրական դասընթացներ և ընթացակարգերի մասնակցությամբ՝ «Այրոգի» ստվերների թատրոնի ներկայացում՝ գիշերային զբոսանք «Էրեբունի»</p> <p>ամրոցում հայկական ժողովրդական երաժշտության կատարումներ: Ժամանակակից արվեստի թանգարան Արտյոմ Մելիք-Ղազարյանի հանդիպում ցուցահանդեսներ կայացում՝ նվիրված Հովհ. Թումանյանի 150 ամյակին երաժշտական ծրագիր: «Կարեն Դեմիրճյան» թանգարան «Վերածննդի համոզմունքով»</p>	<p>2-րդ և 3-րդ եռամսյակներում Աշխատակազմի մշակույթի վարչություն</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

			<p>թեմատիկ ցուցահանդես: ՖրիտոֆՆանսենիթանգարան՝ ՇուշանիկՆալբանդյանի «Հույսի ծաղիկ» գրքի քննարկումը: «ՖրիտոֆՆանսեն աշխարհի իսիդճը» փաստավավերագրական ֆիլմի դիտում:</p>		
5	Թատրոններ				
5.1	Թատրոնների խաղացանկերի համալրմանը ուղղված գործողությունների կատարում	Թատրոնների խաղացանկերը համալրելու նպատակով, նախատեսվում է 2019թ. իրականացնել 10-15 նոր բեմադրություն, համալրել ստեղծագործական կազմը, բարձրացնել ներկայացումների որակը, իրականացնել համապատասխան բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինում, ապահովել մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոններին:	<p>Երևանի քաղաքապետարանի ենթակայության թատրոններում իրականացվել են 11 բեմադրություններ: Այդ թվում՝ Մհեր Մկրտչյանի արտիստական թատրոնում 5, Պատանի հանդիսատեսի թատրոնում 4, Իսկ Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում 2 ներկայացումներ:</p> <p>1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/75 2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/77 3. ԵՔ-ՄԱԾՁԲ-19/79</p> <p>Մեկնարկել է «Երևանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ-ի վերանորոգման և վերազինման ծրագիրը աշխատանքների կատարման հեղինակային հսկողության իրականացմամբ:</p>	<p>Տարվա ընթացքում</p> <p>Աշխատակազմի մշակույթի վարչություն</p> <p>1.«Բազալտշին» ԱԿ 01.11.2019 2. «Բրիդջ» ՄՊԸ 04.11.2019 3.«Նյու ինդասթիզ» ՄՊԸ 16.08.2019</p>	
5.2	Ստեղծագործությունների բեմադրում	Նախատեսվում է ազգային թատերարվեստի լավագույն նմուշների	<p>Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թատրոններում իրականացված բեմադրումներն են՝ «Մի համեստ դիակ, կամ ելք կա», «Միայն ոչ այսօր», «SQ... սիրում եմ քեզ», «Չարլիի մորաքույրը», «Մոխրոտիկը», «Տիկնայք և պարոնայք», «Գանգստեր Մաքր», «Առնետաորս», «Մատնաչափիկը»,</p>	<p>Տարվա ընթացքում</p> <p>Աշխատակազմի մշակույթի վարչություն</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում:	«Ջրահարսը», ինչպես նաև վերաբեմադրվել է «Հիշիր վաղվա օրդ» և վերականգնվել են «Շունն ու կատուն» և «Մերսեդես» ներկայացումները:		
6	Գրադարաններ				
6.1	Գրադարանների գործառնություններին համապատասխան և միջոցառումների կազմակերպում	Գրադարանների գործառնություններին համապատասխան նախատեսվում է իրականացնել գրական, գրական-երաժշտական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան և գրքի և երաժշտության շաբաթ, Ազգային գրադարանային շաբաթ, ինչպես նաև՝ կազմակերպել հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ:	Քաղաքապետարանի ենթակայության գրադարաններում կազմակերպվել են հիշարժան և հոբելյանական տարեթվերին նվիրված գրքային ցուցահանդեսներ, գրքի շնորհանդեսներ, ցերեկույթներ: Գրադարաններում անցկացվել են գրական, գրական-երաժշտական, հուշ-երեկոներ, կազմակերպվել են հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ, իրականացվել են գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ: Կազմակերպվել են մասսայական բնույթի միջոցառումներ՝ որպես նոր ընթերցողների ներգրավման և մշակութային, կրթադաստիարակչական քաղաքականության վարման կարևորագույն միջոց: ՀՈԱԿ-ի ֆոնդը նոր գրականությամբ:	Տարվա ընթացքում Աշխատակազմի մշակույթի վարչություն	
6.2	Ազգային, պետական և հոգևոր տոներին նվիրված թեմատիկ միջոցառումների կազմակերպում	Կազմակերպվել են ազգային, պետական, հոգևոր տոներին ու հիշարժան տարեթվերին նվիրված գրքային և մշակութային-	Կազմակերպվել են Հայոց ցեղասպանության, մայիսյան հաղթանակներին, երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ և միջոցառումներ: Կազմակերպվել են մասսայական բնույթի միջոցառումներ՝ որպես նոր ընթերցողների ներգրավման և մշակութային, կրթադաստիարակչական քաղաքականության իրականացման կարևորագույն միջոց, կազմակերպվել են հիշարժան և	Տարվա ընթացքում Աշխատակազմի մշակույթի վարչություն	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ և այլն: Կկազմակերպվի գրադարանավարի օրվան նվիրված «Հանդիպման վայրը գրադարան» ամենամյա միջոցառումը:	հորեյանական տարեթվերին նվիրված գրքային ցուցահանդեսներ:		
6.3	Նոր տեխնոլոգիաների ներդրում գրադարաններում	Գրադարաններում նախատեսվում է տեղեկատվական-հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում, գրադարանային ֆոնդերի թվայնացման գործընթացի խթանում:	Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի բոլոր մասնաճյուղերում ավարտվել են էլեկտրոնային «ELGRAD» և «Koha» ծրագրերով գրացուցակների ստեղծման աշխատանքները և 2019թ. նոյեմբերից մասնաճյուղերում կազմակերպվել է ընթերցողների էլեկտրոնային սպասարկում՝ փորձնական ժամանակահատվածով, իսկ 2020թ. հունվարի 1-ից ՀՈԱԿ-ի բոլոր գրադարան-մասնաճյուղերը, արվեստի և տեխնիկական գրականության բաժինները իրականացնելու են էլեկտրոնային սպասարկում և գրադարանային գործառնությունների ավտոմատացում:	3-րդ և 4-րդ եռամսյակներում Աշխատակազմի մշակույթի վարչություն	
6.4	«Մշակութային երկխոսություն» ծրագրի գործունեության կազմակերպում	«Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում կշարունակեն	Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանում գործում են /ՀՀ-ում գրադարաններից առաջինում/ Ամերիկյան, Բրիտանական, Ասիական, Ֆրանկոֆոնիայի կենտրոնները և այդ կենտրոններում «Մշակութային երկխոսություն» ծրագրով 2-րդ եռամսյակում կազմակերպվել են 18 ֆիլմերի անվճար	Տարվա ընթացքում Աշխատակազմի մշակույթի վարչություն	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>իրենց գործունեությունը «Մշակութային երկխոսություն» ծրագրով՝ «Ամերիկյան անկյունը», «Ֆրանկոֆոնիայի կենտրոնը», «Բրիտանական կենտրոնը» և «Ասիական կենտրոնը» Կիրականացվեն ֆիլմերի անվճար ցուցադրություններ, դասախոսություններ, անգլերենի և ֆրանսերենի անվճար ուսուցման դասընթացներ տարիքային տարբեր խմբերի համար:</p>	<p>ցուցադրություն, ամերիկյան և բրիտանական անգլերենի, ֆրանսերենի խոսակցական ակումբների 48 պարապմունք, մանկական և դեռահասների ակումբների 53 հանդիպում, անգլերեն, ֆրանսերեն և պարսկերեն լեզուների ուսուցման անվճար 72 ժամ, բիզնես անգլերեն 6 ժամ, ռոբոտաշինություն 6 ժամ, 3D մոդելավորում 12 ժամ դասընթացներ:</p> <p>ՀՈԱԿ-ի աշխատակիցները ԿԳ-ի համակարգչային բաժնում պարբերաբար կատարելագործել են իրենց համակարգչային-օպերատորական գիտելիքները՝ ձեռք բերելով նոր տեխնիկական հմտություններ:</p> <p>Շարունակական բնույթ են կրում ՀՀ-ում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իրանի և այլ երկրների դեսպանատների և ՀՈԱԿ-ի համագործակցության ծրագրերը: Մշտապես նորացվում են համաշխարհային տեղեկատվական դաշտում կազմակերպության երկու անհատական WEB էջերը. հասցե՝</p> <p>1. www.isahakyanlibrary.am 2. www.yerevan.americancorners.am,</p> <p>որտեղ տեղեկատվություն է տրված ՀՈԱԿ-ի և Ամերիկյան կենտրոն բաժնի պատմական տարեգրության և կառուցվածքի, ծառայությունների մասին, նաև մշտապես թարմացվել է «Նորություններ» դաշտը՝ 3 լեզվով /հայերեն, անգլերեն, ռուսերեն/:</p>		
6.5	<p>Էլեկտրոնային գրադարանի ֆոնդերի թվայնացման, համալրման գործընթացի շարունակում և նոր ծրագրերի տեղադրում</p>	<p>«Հայաստանի գրադարանների ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակում «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ը կշարունակի իր</p>	<p>Երևանի «Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի» հետ շարունակվել են ընթերցողների էլեկտրոնային սպասարկման ծրագրի ներդրման և զարգացման աշխատանքները. 2012թ. հունիսից /ՀՀ-ում հանրային գրադարաններից առաջինում/ Իսահակյան գրադարանում սկսվել է ընթերցողների էլեկտրոնային սպասարկումը, նաև ԿԳ-ի էլեկտրոնային գրադարանի ֆոնդերը համալրելու և ֆոնդերի թվայնացման գործընթացը: Թվային բազայում տեղադրվել են նոր ծրագրեր, իսկ ԿԳ-ի սերվերը բաց, ազատ և հասանելի է 24 ժամ: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Հատուկ խմբերի /հաշմանդամներ/ համար տեղադրված է «ELGRAD»-ի թվային բազան՝ «Ոսկե շղթա 1,2,3»</p>	<p>Տարվա ընթացքում</p> <p>Աշխատակազմի մշակույթի վարչություն</p>	

		<p>աշխատանքները և կիրականացնի գրադարանի գրքային ֆոնդի մուտքագրումը ընդհանուր տեղեկատվական բազա: Կշարունակվի էլեկտրոնային գրադարանի ֆոնդերի թվայնացման, համալրման գործընթացը և նոր ծրագրերի տեղադրումը: Իրենց աշխատանքները կշարունակեն նաև հատուկ խմբի համար /տեսողական խնդիրներ ունեցող/ «ԱՐԵՎ» էլեկտրոնային-թվային համակարգը, իսկ լսողական խնդիրներ ունեցողների համար՝ «ԷԼԳՐԱԴ»-ի թվային բազաների «Ոսկե շղթա 1,2,3» ծրագրերը:</p>	<p>ծրագրերով: Իրականացվում է ՀՈԱԿ-ի աշխատակազմի շարունակական ուսուցում «ALEF», «Koha» և «ELGRAD» ծրագրերով: Հունիսին գրադարանի բոլոր մասնաճյուղերի աշխատակիցներն անցան մեկշաբաթյա «ELGRAD» ծրագրի ուսուցման դասընթաց: «ELGRAD» և «Koha» ծրագրերով ֆոնդերի մուտքագրման աշխատանքները շարունակվում են նաև ՀՈԱԿ-ի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում: Բոլոր գրադարանները պարբերաբար կշարունակեն ֆոնդերի մուտքագրումը «ELGRAD» և «Koha» համակարգերով:</p>		
--	--	---	---	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

7 Երաժշտական և արվեստի դպրոցներ					
7.1	Համերգների, մրցույթների, փառատոների կազմակերպում	Երաժշտական և արվեստի դպրոցներում կշարունակվի համերգների կազմակերպումը, հանրապետական ու միջազգային մրցույթների, փառատոների մասնակցությունը: Ուսումնական տարվա վերջում կկազմակերպվեն հաշվետու համերգներ, երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոներ:	Երաժշտական և արվեստի դպրոցների դաշնամուրի, լարային, փողային, վոկալի և կերպարվեստի բաժինների աշակերտների մասնակցությամբ կազմակերպվել են համերգային ծրագրեր, թեմատիկ միջոցառումներ, ցուցահանդեսներ՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին, մայիսի 9-ին՝ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակին, մայիսի 28-ին՝ Առաջին Հանրապետության օրվան: Դպրոցների աշակերտները մասնակցել են միջազգային, հանրապետական փառատոների, մրցույթների և ցուցահանդեսների շահելով մրցանակներ և դիպլոմներ: Մայիսի 13-ից մինչև մայիսի 27-ը կայացավ Երևանի քաղաքապետարանի երաժշտական և արվեստի դպրոցների 12-րդ մրցույթ-փառատոնը 10 անվանակարգերով, որին մասնակցել են Երևանի քաղաքապետարանի 10 արվեստի և 15 երաժշտական դպրոցների շնորհալի աշակերտները: Հունիսի 18-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում իրականացվեց ամփոփիչ փառատոնի ամփոփիչ համերգը:	Տարվա ընթացքում Աշխատակազմի մշակույթի վարչություն	
7.2	Ա.Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոն անցկացում	Ա.Խաչատրյանի տուն-թանգարանում կանցկացվի Ա.Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոնը:	Հունիսի 6-ին իրականացվեց Պատանի ստեղծագործողների մրցույթ-փառատոն՝ նվիրված Արամ Խաչատրյանի ծննդյան 116-ամյակին: Մրցույթի արդյունքներով խրախուսվեցին լավագույն մասնակիցներն ու դասատուները:	2-րդ եռամսյակում Աշխատակազմի մշակույթի վարչություն	
7.3	«Բաց դաս» խորագրով ծրագրի	Կշարունակվի «Բաց դաս» խորագրով ծրագրի	Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող երաժշտական և արվեստի դպրոցները իրականացրել են «Բաց դաս» խորագրով միջոցառումը, որի շրջանակում ուսուցիչները և	2-րդ և 4-րդ եռամսյակներում	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

	իրականացում	իրականացումը: Մասնագետներն ու դպրոցի սաները կիրականացնեն բացօթյա հանրային դասընթացներ՝ ներգրավելով հանրության լայն շերտեր՝ հանրահռչակելով մշակութային մասնագիտական կրթությունը:	մանկավարժները հանրությանն են ներկայացրել կրթական գործընթացը, իրնպես նաև մասագիտական հիմնությունների առանձնահատկությունները:	Աշխատակազմի մշակույթի վարչություն	
7.4	Մոռացվող ազգային նվազարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանմանը, տարածմանը և հանրահռչակմանը միտված ուսուցման ծրագրի իրականացում	Շարունակվելու է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվազարանների գծով ուսուցման ծրագիրը՝ միտված մոռացվող ազգային նվազարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանմանը, տարածմանը և հանրահռչակմանը:	Ազգային նվազարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանման, տարածման և հանրահռչակման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով երաժշտական և արվեստի դպրոցներում իրականացվում է ազգային, լարային և փողային նվազարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիրը:	Տարվա ընթացքում Աշխատակազմի մշակույթի վարչություն	
7.5	Անհրաժեշտ գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերում	Երաժշտական և արվեստի դպրոցների համար անհրաժեշտ գույքի և երաժշտական գործիքների	1.ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214-2 2.ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214-3 3.ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/214-1 Իրականացվել է երաժշտական և արվեստի դպրոցների համար անհրաժեշտ գույքի և երաժշտական գործիքների	1.«ՀԱՇԳԱ» ՍՊԸ 08.11.2019 2.«ԻՍԱԽԱՆ» ՍՊԸ» 08.11.2019 3.«ՏԵՍԱԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ 01.11.2019	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		ձեռքբերման ծրագրերը կրելու են շարունակական բնույթ:	աժտական գործիքների ձեռքբերման գործընթաց, որի արդյունքում ձեռք է բերվել 27 անուն 110 երաժշտական գործիք:	Մշակույթի վարչություն	
8	Մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ				
8.1	Մշակութային միջոցառումների, համերգային ծրագրերի, ցուցահանդեսների կազմակերպում	Մշակույթի տներում, գեղագիտական, ստեղծագործական կենտրոններում նախատեսվում է պետական, ազգային տոներին և հիշարժան տարեթվերին նվիրված մշակութային միջոցառումների, համերգային ծրագրերի, ցուցահանդեսների կազմակերպում:	Մշակույթի տներում, գեղագիտական, ստեղծագործական կենտրոններում իրականացվել են պետական, ազգային տոներին և հիշարժան տարեթվերին նվիրված մշակութային միջոցառումների, համերգային ծրագրերի, ցուցահանդեսների կազմակերպում: Իրականացվել են թեմատիկ միջոցառումներ, նվիրված մայրության և գեղեցկության տոնին, մայիսի 9-ին՝ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակին, մայիսի 28-ին՝ Առաջին Հանրապետության օրվան Էրեբունի-Երևան տոնակատարությանը, Ամանորին և Սուրբ Ծննդյան տոներին:	Տարվա ընթացքում Աշխատակազմի մշակույթի վարչություն	
9	Այլ մշակութային կազմակերպություններ				
9.1	Հանրության հետ շփման շրջանակների ընդլայնմանն ուղղված աշխատանքների իրականացում	Նախատեսվում է ապահովել վերոնշյալ կազմակերպությունների մասնակցությունը համերգների, փառատոների, ցուցահանդեսների ինչպես Հայաստանում, այնպես էլ՝	Աշխատակազմի մշակույթի վարչության ենթակայությամբ գործող կազմակերպությունների կողմից իրականացվել են միջարք միջոցառումներ, համերգներ՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին, մայիսի 9-ին՝ Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակին, մայիսի 28-ին՝ Առաջին Հանրապետության օրվան, Էրեբունի-Երևան տոնակատարությանը, Ամանորին և Սուրբ Ծննդյան տոներին:	Տարվա ընթացքում Աշխատակազմի մշակույթի վարչություն	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		արտերկրում: Կիրականացվեն աշխատանքներ՝ ուղղված հանրության հետ շփման շրջանակների ընդլայնմանը, որը կապահովի կազմակերպություն ների որակի բարձրացմանն ու հանրահռչակմանը:			
10 Կենդանաբանական այգի					
10.1	Երևանի կենդանաբանական այգու կենդանիների պահպանմանը, բազմացմանն ու ցուցադրմանն ուղղված աշխատանքների իրականացում	Նախատեսվում է իրականացնել՝ աշխատանքներ՝ ուղղված Երևանի կենդանաբանական այգու վայրի կենդանիների պահպանմանը, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացմանն ու ցուցադրմանը:	Շարունակվում են Երևանի կենդանաբանական այգու վայրի կենդանիների պահպանմանը, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացմանն ու ցուցադրմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները:	Տարվա ընթացքում Աշխատակազմի մշակույթի վարչություն	
10.2	Երևանի կենդանաբանական այգու արդիականացման գործընթացի իրականացումն ու գործընթացի իրականացում	Նախատեսվում է այգու արդիականացման գործընթացի իրականացում, նոր ազատավանդակների կառուցում և	Ծրագիրը չի իրականացվել և հետաձգվել է անորոշ ժամանակով:		Երևանի կենդանաբանական այգու արդիականացման ծրագրի իրականացում

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>տարածքի ընդլայնում, առկա ջրային ռեսուրսների վերամշակման և վերօգտագործման կենտրոնի ստեղծում, կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդրում և այլն:</p>			<p>ան շրջանակում կատարված ուսումնասիրությունների և տեղազննումների արդյունքում պարզվել է, որ Կենդանաբանական այգու սահմանները և դրանում տեղակայված շենք-շինությունները չեն համապատասխանում անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման վկայականի տվյալներին: Ուստի նշված ծրագրի իրականացումը հետաձգվել է անորոշ</p>
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

				<p>Ժամկետով՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի զբաղեցրած հողատարածքի սահմանների, ինչպես նաև դրանում տեղակայված շենք-շինությունների տեղադիրքերի ճշգրտման և փաստաթղթավորման գործընթացի հետ կապված աշխատանքների իրականացումից հետո:</p>
--	--	--	--	--

Միջազգային համագործակցություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Էրեբունի-Երևան միջոցառումների նախապատրաստական աշխատանքների իրականացում	Նախատեսվում է իրականացնել Էրեբունի-Երևան միջոցառումների նախապատրաստական, կազմակերպչական և անցկացման աշխատանքներ:	1.ԵՔ-ՄԱԾՁԲ-19/107-1 2.ԵՔ-ՄԱԾՁԲ-17/50-1 3.ԵՔ-ՄԱԱՊՁԲ-19/12-2 4.ԵՔ-ՄԱԱՊՁԲ-19/12-1 5. ԵՔ-ՄԱԾՁԲ-19/107-2 Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել Թբիլիսիի և Ստեփանակերտի քաղաքապետերի, Պետական Էրմիտաժի տնօրենի պաշտոնական այցի հետ կապված, ինչպես նաև Էրեբունի-Երևան միջոցառումների արարողակարգի ապահովման ուղղությամբ:	1.Տոսպիա ՍՊԸ 2.Հրազդան ՓԲԸ 3.Կ.Ներսիսյան Ֆ/Ա 4. Ս.Գևորգյան Ֆ/Ա 5.Հայր և որդի Երեմյաններ ՍՊԸ Սեպտեմբեր-հոկտեմբեր	Թբիլիսիի քաղաքապետի այցը չի կայացել:
2	ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցներից տեխնիկական օժանդակության ստացման նպատակով բանակցությունների վարում	Նախատեսվում է ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցներից տեխնիկական օժանդակության ստացման վերաբերյալ բանակցություններ ի վարում:	Բանակցություններ են տարվել ՀՀ-ում ՉԺՀ դեսպանության հետ տեխնիկական աջակցություն տրամադրելու նպատակով: Բանակցությունների արդյունքում դեսպանությունը Երևանի քաղաքին տրամադրել է «Կամագ» մակնիշի աղբատար մեքենա որպես օժանդակություն:	Օգոստոս-սեպտեմբեր	
3	Քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներին	Նախատեսվում է աջակցել զբոսաշրջային, ներդրումային,	Բանակցություններ են վարվել, մասնավորապես Սանկտ Պետերբուրգ, Լիոնի և Մարսել քաղաքների հետ:	Հունվար-դեկտեմբեր	

	<p>վերաբերող շնորհանդեսների կազմակերպման աջակցություն</p>	<p>քաղաքային տնտեսության կառավարման առաջավոր փորձին և այլ միջազգային համաժողովներին, ֆորումներին, ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող շնորհանդեսների կազմակերպմանը:</p>			
<p>4</p>	<p>Համագործակցություն միջազգային և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ</p>	<p>Նախատեսվում է համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում, ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ կոնկրետ ծրագրերի ներկայացման</p>	<p>2019 թվականի ընթացքում նախապատրաստվել և կազմակերպվել են հանդիպումներ Երևանի քաղաքապետի և ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ հանդիպումներ. ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան, Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, Ճապոնիա արտակարգ և լիազոր դեսպան, Լիբանանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, Շվեդիայի Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան, Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, Պերուի արտակարգ և լիազոր դեսպան, Եվրոպական Միության պատվիրակության ղեկավար, դեսպան Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր</p>	<p>Հունվար-դեկտեմբեր</p>	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

		<p>առումով, ակտիվացնել Երևանի տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները, տրամադրել տեղեկատվություն Երևանի քույր և գործընկեր քաղաքներին Երևան քաղաքում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ, ինչպես նաև ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի ու քույր և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև՝ զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով:</p>	<p>դեսպան, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան, Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան, ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ-ի մշտական ներկայացուցիչ, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչ, Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպանի հետ:</p> <p>ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության դեսպանության աջակցությամբ Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը մարտի 18-22-ը մեկնել է Չեխիայի Հանրապետություն քաղաքային տրանսպորտի սեկտորը և տեղական տրանսպորտային արտադրությունը ուսումնասիրելու, ինչպես նաև փորձի փոխանակման նպատակով: Իրականացվել են նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ ԵՄ հետ համատեղ ս.թ. մայիսի 21-ին Երևանում «Եվրոպայի օրվա» շրջանակներում մի շարք միջոցառումների անցկացման ուղղությամբ:</p> <p>Ապահովվել է Երևան քաղաքի հյուր պատվիրակությունների /Սանկտ Պետերբուրգ և Ցին Դաու քաղաքների/ մասնակցությունը հոկտեմբերին 6-9-ը Երևանում կայանալիք տեղեկատվական տեխնոլոգիաների 23-րդ համաշխարհային համաժողովին և Երևանում այցի ծրագրի կազմակերպումը:</p>		
5	Եղբայրության	Նախատեսվում է	Երևանի քաղաքապետարանի և Սանկտ-Պետերբուրգի	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի իրականացման հաշվետվության նախագիծ

